«ԱԳԱՔ»
Հատուկ Կարիքներով Կանանց Կենտրոն
Հասարակական Կազմակերպություն

Բաց Հասարակության Հիմնադրամներ - Հայաստան

ՄԵՐ ՁԱՅՆԵՐԸ ՄԵՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

հետազոտական ծրագիր

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Գյումրի 2015

Բաց Հասարակության Հիմնադրամներ - Հայաստան

«ԱԳԱՔ»
ՀԱՍՈՒԿ ԿԱՐԻՔԵՐՈՎ
ԿՈՆՈՒՄՆԵՐԻ
ՀԱՍՈՒՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«ՄԵՐ ՁԱՅՆԵՐԸ-ՄԵՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ»

01 Հունիս – 30 Նոյեմբեր, 2015

Հետազոտական ծրագիր
Հաշվետվություն

Հետազոտական խումբ՝
Զառա Աղանյան
Կարինե Գրիգորյան
Լաուրա Բաբայան

Գյումրի 2015

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հապավումների ցանկ …….. 3

Երախտիքի խոսք …….. 4

Ծրագրային համատեքստ ……... 5

Համատեքստային տեղեկատվություն …….. 6

Արդյունքներ

1. ՀՀ-ում գործող հասարակական կազմակերպությունների՝ հաշմանդամություն ունեցող կանանց հիմնախնդիրների լուծմանն ուղղված գործունեության գնահատումը …… 7

2. Հաշմանդամություն ունեցող կանանց նկատմամբ խտրականության և բռնության հնարավոր դրսևորումների գնահատումը Հայաստանում …..…….. 27

Եզրակացություններ, առաջարկություններ ……... 76

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ՀՈՒԱ	Հաշմանդամություն ունեցող անձ
ՀՈՒԿ	Հաշմանդամություն ունեցող կին
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՓՄՁ	Փոքր և միջին ձեռնարկատիրություն
ԲՀՀ-Հայաստան	Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան
ՏՏ	Տնային տնտեսություն
ՍԾ	Սոցիալական ծառայություն
ՊՍԾ	Պետական սոցիալական ծառայություն
ՀԿՍԾ	Հասարակական կազմակերպությունների սոցիալական ծառայություն

ԵՐԱԽՏԻՔԻ ԽՈՍՔ

«Ագաթ» հատուկ կարիքներով կանանց կենտրոն հասարակական կազմակերպությունը 2015 թ.-ի հունիս-նոյեմբեր ամիսներին իրականացրեց «Մեր ձայները–մեր իրավունքները» ծրագիրը «Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան»-ի ֆինանսական աջակցությամբ, որը լուրջ ներդրում հանդիսացավ Հայաստանում հաշմանդամություն ունեցող կանանց նկատմամբ խտրականության և բռնության դրսևորումների ուսումնասիրության, դրանց կանխարգելմանն ուղղված առաջարկությունների մշակման համար: Ծրագիրն առավել քան կարևոր էր և հրատապ, քանի որ իրականացվեց ազգային մակարդակով՝ ընդգրկելով Հայաստանի բոլոր մարզերը, ինչպես նաև Երևանը:

Հետազոտական ծրագիրը հնարավոր դարձավ մեծ թվով մասնակիցների, հետազոտական խմբի, նախաձեռնող «Ագաթ» ՀԿ-ի և տարբեր համագործակից կառույցների, կազմակերպությունների և կամավորների շնորհիվ: Հատուկ երախտագիտությամբ պետք է նշել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը, Հայաստանում գործող թվով 20 ՀԿ-ներին՝ «Ազգային առաջնորդության ինստիտուտ», «Աստղավարդ», «Արևի շող», «Դիսըբիլիթի Ինֆո» , «Թալին-հույս», «Լիարժեք կյանք», «Լռության ձայն», «Կանթեղ Արագածի», «Հույսի Մեծամոր», «Մեղրու կանանց ռեսուրս կենտրոն», «Մենք կարող ենք», «Նոր աստղ», «Ողջի», «Ունիսոն», «Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ», Հաշմանդամների «Փյունիկ» միության Գյումրու մասնաճյուղ, Հայաստանի հաշմանդամների «Փյունիկ» Միություն, Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ և Կանանց Զարգացման Ռեսուրս Կենտրոն Հիմնադրամին:

Շատ կարևոր և գնահատելի էր նաև «Ագաթ» ՀԿ-ի հետազոտական թիմի, հատկապես ծրագրի ղեկավար Կարինե Գրիգորյանի և ծրագրի աշխատակազմի՝ Գայանե Գրիգորյանի, Մարինե Ավետիսյանի, Ռոզա Ավագյանի, Աննա Ղուկասյանի և Վարդանուշ Գոլչենկոյի նվիրումը ծրագրին և աջակցությունը հետազոտական գործընթացներին: Հետազոտական ծրագրի հաջող իրականացումը հնարավոր չէր լինի առանց հարցազրուցավարների, ովքեր կազմակերպել են դաշտային հետազոտության շրջանակներում իրականացված տվյալների հավաքագրման հետ կապված բոլոր գործողությունները: Եվ վերջապես, հետազոտական թիմը հատուկ շնորհակալություն է հայտնում հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկներին, ովքեր մասնակցել են հարցազրույցներին և տրամադրել են անհրաժեշտ տեղեկատվությունը:

ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

ՄԱԿ-ի գնահատմամբ ներկայումս աշխարհում ապրում են ավելի քան 1 միլիարդ հաշմանդամություն ունեցող անձինք՝ ամբողջ բնակչության 15% -ը, և նրանց մեծամասնությունը կանայք են:

Առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալների համաձայն՝ աշխարհի կանանց 35%-ը իր կյանքի ընթացքում սեռով պայմանավորված բռնության է ենթարկվել: Հաշմանդամություն ունեցող կանայք և երեխաները անհամեմատ ավելի խոցելի խմբում են: Հաշմանդամություն ունեցող անձինք երեք անգամ ավելի շատ են ենթարկվում ֆիզիկական, սեռական և հոգեբանական բռնության: Նրանք բախվում են խտրականության բազմաթիվ տեսակների, ներառյալ սեռով և հաշմանդամությամբ պայմանավորված խտրականությունը, ինչը նրանց դարձնում է ավելի մեկուսացված և խոցելի բռնության նկատմամբ:

Հայաստանի Հանրապետությունում 2015 թվականի դրությամբ չունենք հետազոտություններ կամ վիճակագրական տվյալներ հաշմանդամություն ունեցող կանանց դեմ բռնության դրսևորումների վերաբերյալ:Սույն ծրագիրը նախատեսում է լրացնել այդ բացը ՝ ստույգ տեղեկություններ և տվյալներ հավաքագրելով հաշմանդամություն ունեցող կանանց դեմ բռնության տարբեր դրսևորումների վերաբերյալ, ինչպես նաև պարզելու, թե կանանց և հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներով զբաղվող կազմակերպությունների և հաշմանդամահեն կազմակերպությունների ծրագրերը որքանով են ներառական հաշմանդամության և գենդերային տեսանկյունից:

Մենք շատ հաճախ բարձրաձայնում ենք, որ հաշմանդամություն ունեցող կանայք կրկնակի խոցելի են և ենթարկվում են բռնության կյանքի տարբեր ոլորտներում: Թեև հաշմանդամություն ունեցող անձանց և կանանց իրավունքներով զբաղվող հասարակական կազմակերպություններն իրականացնում են տարբեր ծրագրեր, սակայն դրանք ներառական չեն գենդերային և հաշմանդամության տեսանկյունից: Հայաստանը վավերացրել է մի շարք միջազգային պարտավորություններ՝ մասնավորապես կանանց դեմ խտրականության բոլոր ձևերի վերացման կոնվենցիան, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիան և համընդհանուր պարբերական դիտարկումը, և դրանց շրջանակներում ստանձնել է իրականացնել բազում առաջարկություններ, այդ թվում նաև հաշմանդամություն ունեցող կանանց կյանքի որակի բարելավում:

Հաշմանդամություն ունեցող կանայք և աղջիկները, ինչպես հաշմանդամություն չունեցող կանայք, բախվում են գենդային անհավասարությամբ պայմանավորված խտրականության բոլոր դրսևորումներին, և դրան է գումարվում այն բազմաթիվ խտրականության դրսևորումների շղթան, որոնց հանդիպում են բոլոր հաշմանդամություն ունեցող անձինք իրենց առօրյա կյանքում: Մասնավորապես կարող ենք առանձնացնել հաշմանդամություն ունեցող կանանց ցածր մասնակցային տոկոսը որոշումների կայացման գործընթացում: Նույնիսկ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներով զբաղվող կազմակերպությունների ղեկավար պաշտոններում մեծ մասամբ տղամարդիկ են: Հաշմանդամություն ունեցող տղամարդկանցից շատերն ամուսնանում են հաշմանդամություն չունեցող կանանց հետ, իսկ կանանց դեպքում իրավիճակն այլ է: Հասարակության մեջ դեռևս արմատավորված է այն թյուր կարծրատիպը, որ, եթե կինը հաշմանդամություն ունի, չի կարող լիարժեք կյանքով ապրել, ընտանիք կազմել, երեխա ունենալ, տնային տնտեսությանը հետևել և այլն, և այդ է պատճառը, որ մեր երկրում հաշմադամություն ունեցող աղջիկների մեծ մասը չի ամուսնանում: Տնտեսական անկախության տեսանկյունից, հաշմանդամություն ունեցող կանայք ավելի դժվարությամբ են աշխատանք գտնում, իսկ վարկային կազմակերպությունները շատ հաճախ մերժում են վերջիններիս վարկ տրամադրել՝ գործարարությամբ զբաղվելու համար:

ՀԱՄԱՏԵՔՍՏԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության նպատակը և խնդիրներն են՝

1. Ուսումնասիրել ՀՈՒԿ կենսագործունեության հիմնական ոլորտներում անհավասարության, խտրականության և բռնության թաքնված դրևորումների առկայությունը:
2. Գնահատել ՀՈՒԿ շրջանում իրավունքների վերաբերյալ իրազեկվածության մակարդակը:
3. Գնահատել Հայաստանում քաղաքացիական ինստիտուտների մասնակցությունը ՀՈՒԿ հիմնախնդիրների լուծմանն ուղղված գործունեությունը:
4. Բացահայտել ՀՈՒԿ հատուկ կարիքները և մշակել ՀԿ-ների համար առաջարկությունների փաթեթ:
5. Ուսումնասիրել ՀՈՒԿ կյանքի պայմանները՝ բացահայտելով այն ռիսկային գործոնները, որոնք կարող են հանգեցնել բռնության տարբեր դրսևորումների:

6. Վերլուծել քաղաքացիական հասարակության ինստիտուտների կառույցների ներգրավման արդյունավետությունը՝ Հայաստանում հաշմանդամություն ունեցող կանանց հիմնախնդիրների լուծմանն աջակցելու գործընթացներում:
7. Գնահատել հաշմանդամություն ունեցող կանանց սոցիալական և առողջապահական ծառայություններ մատուցող ինստիտուտների գործունեության արդյունավետությունը:
8. Գնահատել ՀՈՒԿ կենսապայմանները և ընտանեկան հիմնախնդիրները:

Աղյուսակներ

Հետազոտական ծրագրի արդյունքները ամփոփվել են ուսումնասիրության երկու հիմնական ուղղություններով՝

1. ՀՀ-ում գործող հասարակական կազմակերպությունների շրջանում իրականացված հետազոտություն:
2. ՀՀ-ի բոլոր մարզերում և Երևանում բնակվող 18-65 տարեկան թվով 150 հաշմանդամություն ունեցող կանանց շրջանում իրականացված հարցումներ:

Հետազոտության արդյունքում ստացված ելակետային տվյալների վերլուծության հիման վրա ձևակերպվել են ծրագրի հիմնական եզրակացություններն ու առաջարկությունները:

1. ՀՀ-ՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ՝ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԵՎ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

«Մեր ձայները -մեր իրավունքները» հետազոտական ծրագրի կարևորագույն նպատակն է ուսումնասիրել և գնահատել Հայաստանում գործող հասարակական ոլորտի կառույցների ծրագրերում ՀՈՒԿ ներգրավվածության աստիճանը:

Հայաստանի նման բազմաթիվ չլուծված սոցիալական խնդիրներ ունեցող երկրի համար հասարակության ամենախոցելի խմբերի շահերի պաշտպանության և նրանց անհրաժեշտ ծառայություններ մատուցելու գործում նշանակալից դեր են խաղում հասարակական կազմակերպությունները: Հաճախ վերցնելով իրենց ուսերին պետական ինստիտուտների տարբեր գործառույթներ՝ հասարակական կազմակերպություններն իրենց

գործունեությամբ լրացնում են սոցիալական պաշտպանության, խնամքի, բազմաբնույթ սոցիալական ծառայությունների տրամադրման բացերը: Ակնհայտ է, որ պետությունը ի վիճակի չէ ամբողջովին լուծել իր քաղաքացիների կրթական, սոցիալական, առողջապահական և մի շարք այլ խնդիրներ: Ժամանակակից հասարակությունն առանց ՀԿ-ների աջակցության չի կարող հաղթահարել բազմաթիվ դժվարություններն ու մարտահրավերները, որոնց բախվում են ՀՈՒԱ իրենց առօրյա կյանքում: Իսկ հաշմանդամություն ունեցող կանայք գտնվում են կրկնակի դժվարությունների, բարդույթների և ճնշումների կիզակետում:

Քաղաքացիական հասարակության ինստիտուտները հանդիսանում են խոցելի խմբերի, այդ թվում ՀՈՒԿ համար առողջապահական, սոցիալական, հոգեբանական և իրավաբանական աջակցության ապահովման կարևորագույն դերակատարներ, պետության հենարաններ: Շատ բարդ է գնահատել հասարակական կազմակերպությունների ներդրման ողջ արժեքը, քանի որ պետությունը լիարժեքորեն չի հաշվառում ՀԿ-ների կողմից մատուցված ծառայությունները և չի տեսնում ՀԿ-ներին որպես լիարժեք գործընկեր՝ խոցելի խմբերին անհրաժեշտ ծառայություններ մատուցելու գործում: «Մեր ձայները - մեր իրավունքները» ծրագրի կարևորագույն նպատակներից է հստակեցնել ՀԿ-ների դերը ՀՈՒԿ առաջնային կարիքների լուծմանն ու զարգացմանն ուղղված սոցիալական, առողջապահական, հոգեբանական և այլ ծառայությունների մատուցման գործում: Այդ գործընթացում ՀԿ-ների մասնակցության գնահատման նպատակով նախաձեռնվել է իրականացնել հետազոտություն ՀՀ-ում գործող կազմակերպությունների շրջանակում:

Հարցման համար ընտրվել են թվով 20 հասարակական կազմակերպություններ, որոնք գործում են երկու հիմնական ոլորտներում՝

- Կանանց իրավունքներով և հիմնախնդիրներով զբաղվող ՀԿ-ներ
- Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներով և հիմնախնդիրներով զբաղվող ՀԿ-ներ

Հետազոտական ծրագրի կարևորագույն նպատակն է գնահատել, թե որքանով են խաչվում, համընկնում վերոհիշյալ երկու ոլորտների կազմակերպությունների գործունեությունը ՀՈՒԿ հիմնահարցերի լուծմանն աջակցելու գործում: ՀԿ-ների շրջանում հետազոտություն անցկացնելու նպատակով կազմվել է առցանց ձևաչափով հարցաթերթիկ՝ docs.google.com կայքի գործիքներով: Ս/թ հուլիսի 16-ից մինչև սեպտեմբերի 16-ը առցանց լրացրել են հարցաթերթը ՀՀ-ում գործող թվով 19 ՀԿ-ներ, իսկ մեկ ՀԿ ուղարկել է իր կողմից լրացված հարցաթերթը էլեկտրոնային փոստով:

Հետազոտության մասնակից ՀԿ-ների ցանկ

1.	«Ագաթ» հատուկ կարիքներով կանանց կենտրոն ՀԿ
2.	«Ազգային առաջնորդության ինստիտուտ» ՀԿ
3.	«Աստղավարդ» ՀԵԾՀԿ
4.	«Արևի շող» ՀԿ
5.	«Դիսբբիլիթի Ինֆո» ՀԿ
6.	«Թալին-հույս» սոցիալական ՀԿ
7.	«Լիարժեք կյանք» ՀԿ
8.	«Լռության ձայն» ՀԿ
9.	«Կանանց Զարգացման Ռեսուրս կենտրոն» Հիմնադրամ
10.	«Կանթեղ Արագածի» ՀԿ
11.	«Հայաստանի հաշմանդամների Փյունիկ միություն» ՀԿ
12.	«Հաշմանդամների Փյունիկ» ՀԿ/ Գյումրու մասնաճյուղ
13.	«Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ» ՀԿ
14.	Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ
15.	«Հույսի Մեծամոր» ՀԿ
16.	«Մեղրու կանանց ռեսուրս կենտրոն» ՀԿ
17.	«Մենք կարող ենք» ՀԿ
18.	«Նորաստղ» ՀԵԾՀԿ
19.	«Ողջի» ՀԿ
20.	«Ունիսոն» ՀԿ

Հարցման մասնակից ՀԿ-ների գործունեության ժամկետը

Հարցմանը մասնակցող ՀԿ-ների փորձառությունը և գործունեության տևողությունը բավականին տարբեր է: Ինչպես երևում է Նկար 1.1-ում, մասնակից ՀԿ-ների 10%-ը գործում են շուրջ 20 տարի, ՀԿ-ների 5%-ի գործունեությունը ավելին է քան 21 տարին: Առավելագույն թվով ՀԿ-ներ՝ 30%-ը, հիմնադրվել են 1995-1999 թթ. միջև ընկած ժամանակահատվածում, երբ Հայաստանում սկսել էր զարգանալ քաղաքացիական ինստիտուտների ձևավորման գործընթացը: ՀԿ-ների 10%-ի ձևավորումը ընդգրկում է 2000-ից 2004 թվականը: Մնացած կազմակերպությունների՝ 55%-ի հիմնադրման ժամկետը չի գերազանցում 10 տարին, ընդ որում՝ 5%-ը նորաբաց ՀԿ-ներ են, 25%-ը գործում են վերջին 2-4 տարի ընթացքում, իսկ ՀԿ-ների մյուս 25%-ի «ստաժը» 5-ից 10 տարի է: Տարբեր ժամանակահատվածում ձևավորված քաղաքացիական կառույցները անցել են զարգացման տարբեր ուղիներ և տարբեր փուլեր:

Նկար 1.1. ՀԿ-ների գործունեության ժամկետը



Հարցման մասնակից ՀԿ-ների գտնվելու վայրը



Հարցման մասնակից ՀԿ-ների 35%-ը գտնվում է Երևանում, 15%-ը՝ Սյունիքի մարզում, իսկ մնացած ՀԿ-ները՝ Շիրակում, Լոռիում, Գեղարքունիքում, Արմավիրում և Արագածոտնի մարզերում:
(Տես Նկար 1.2)

ՀԿ-ների գործունեության աշխարհագրությունը

Հարցման մասնակից ՀԿ-ների գործունեության աշխարհագրությունը բավականին լայն է: Նրանց 50%-ը մատուցում են տարբեր ծառայություններ Երևանում, 25%-ը նշել է, որ գործում է Շիրակում, նույնքանը՝ Լոռիում: Սյունիքի մարզում գործում են հարցվող ՀԿ-ների 20%-ը: Մասնակիցների 15%-ը ծավալում է գործունեություն Արագածոտնի և Արմավիրի մարզերում: ՀԿ-ների 10%-ը նշել է, որ գործում է Գեղարքունիքում, ինչպես նաև Տավուշում: Եվ մեկական ՀԿ-ներ (5%) գործում են Արարատի, Կոտայքի և Վայոց Ձորի մարզերում:
Այսպիսով, հարցման մասնակից ՀԿ-ների գերակշռող մեծամասնությունը՝ 65%-ը, գործում է ՀՀ միայն մեկ մարզում: 15%-ը իր գործունեությունը ծավալում է երկու մարզերում, հարցվածների 3%-ը նշել է, որ գործում է 3 մարզերում, 10%-ը՝ 4 մարզերում: Եվ միայն մեկ ՀԿ գործում է միաժամանակ 6 մարզերում:





Հարցման մասնակից ՀԿ-ների տեսակը



Հարցված ՀԿ-ների գերակշռող մեծամասնությունը՝ 95%-ը, տեղական կազմակերպություններ են: Եվ միայն մեկ կազմակերպություն՝ 5%-ը, ունի միջազգային կազմակերպության կարգավիճակ: (Տե՛ս Նկար 1.5)

ՀԿ-ների գործունեության թիրախ խմբերի ընդհանուր նկարագրությունը

Հարցման մասնակից ՀԿ-ների գերակշռող մեծամասնությունը՝ 90%-ը, գործունեության թիրախ է համարում հաշմանդամություն ունեցող անձանց: 85%-ի ծրագրային գործողություններն ուղղված են երիտասարդների հիմնական կարիքների բացահայտմանը, զարգացման ծրագրերի իրականացմանը: 80%-ի համար առաջնային թիրախ է հանդիսանում երեխաների հիմնախնդիրները: ՀԿ-ների 75%-ը որպես աշխատանքի թիրախ նշում են կանանց հիմնախնդիրները: Մնացած տվյալները ներկայացված են Նկար 1.6-ում:



ՀԿ-ների գործունեության ոլորտների ընդհանուր նկարագրությունը

Հարցմանը մասնակցող ՀԿ-ների գործունեության կարևորագույն ոլորտներն են՝ իրազեկումը, կրթական տարբեր ծառայությունների մատուցումը, ուսուցողական գործառույթների իրականացումը: Այդ մասին նշում են մասնակիցների 95%-ը: ՀԿ-ների 75%-ը պատասխաններում նշել է, որ հիմնական գործունեությունը կապված է թիրախ խմբերի կարողությունների զարգացման, հզորացման հետ: Նույնքանը նշում են, որ աշխատում են շահերի պաշտպանության ոլորտում: Հաջորդ կարևորագույն ոլորտն է մարդու իրավունքների պաշտպանությունը, ինչը կարևորում են կազմակերպությունների ուղիղ կեսը՝ 50%-ը: Հարցմանը մասնակից ՀԿ-



ների միայն 40%-ը իրականացնում են սոցիալական աջակցության, խնամքի ծառայություններ:

Մասնակիցների 20%-ի համար կարևոր ոլորտ է հանդիսանում քաղաքացիական նախաձեռնողականության խթանումը: (Տե՛ս Նկար 1.7) Ավելի քիչ ՀԿ-ներ են ընդգրկված հասարակական գործունեության այնպիսի կարևոր ոլորտներում, ինչպիսին են տնտեսական զարգացումը, միգրացիայի կանխարգելումը, արտակարգ իրավիճակների ռիսկերի կառավարումը և հանրային առողջապահությունը: Հարցման արդյունքները վկայում են, որ Հայաստանում գործող հասարակական կազմակերպությունները, որոնք գործում են միևնույն ոլորտային դաշտում և հիմնականում աշխատում են նույն թիրախների հետ, իրականացնում են նմանատիպ գործունեություն, նման են ծրագրային գործունեությամբ և քիչ են առանձնանում ծառայությունների բազմազանությամբ: Մեծամասամբ ՀԿ-ները նախընտրում են իրականացնել ավելի հեշտ պլանավորվող, կառավարվող, քիչ մարդկային և նյութական ռեսուրսներ պահանջող, արդյուքներին համեմատաբար հեշտ հասանելի և գնահատելի ծրագրեր: Ծրագրեր, որոնք ենթադրում են տնտեսական զարգացման, շահառուների կյանքում ավելի շոշափելի և կայուն փոփոխություններ և ակնկալվող արդյունքներ, հազվադեպ են իրականացվում ՀԿ-ների կողմից: Այս առումով բացառություն հանդիսացող խոցելի խմբերի շահերի պաշտպանությանն ուղղված ծառայությունները որպես հիմնական գործունեության ոլորտ նշել են հարցվող ՀԿ-ների 75%-ը, սակայն հարցման հաջորդ բաժնում, որտեղ մանրամասն նկարագրվում են կոնկրետ ծրագրերի շրջանակներում իրականացվող գործընթացները, բացահայտվում է, որ ՀԿ-ների մի մասը իսկապես ունի զգալի ներդրում թիրախ խմբերի կարիքներին ուղղված գործունեությունը կարգավորող քաղաքականության վրա ազդեցություն ներգործելու հարցում:

Կան նաև ՀԿ-ներ, որոնց գործունեությունը և կոնկրետ ծրագրային քայլերը չեն կարող գնահատվել որպես շահերի պաշտպանություն:

Թիրախ խմբերի հետ աշխատանքում կազմակերպությունները ներկայումս մեծ ուշադրություն են դարձնում իրազեկմանը, կրթական ծրագրերի իրականացմանը, նոր գիտելիքների, հմտությունների, այդ թվում նաև մասնագիտական կարողությունների ձևավորմանը: Այդ թվում ՀԿ-ները աշխատում են նաև ՀՈՒԱ համար անհրաժեշտ կարողությունների, ինչպիսին են Բրայլի գրեր, ժեստերի լեզու, ներառման համար անհրաժեշտ այլ հմտությունների ձևավորման ուղղությամբ, բացառություն չեն մասնագիտական հմտությունները, զբաղվածությանը խթանող գիտելիքները:

Մեծ բաց կա նախաձեռնողականության խթանման, քաջալերման ոլորտում՝ թե՛ քաղաքացիական, թե՛ ձեռնարկատիրական: ՀՈՒԱ, մասնավորապես, կանանց ներուժի զարգացմանն ուղղված գործունեությունը ունի անհրաժեշտություն զարգանալու և ընդլայնվելու: Հաշմանդամություն ունեցող կանանց ներառման, ինքնուրույնության և հավասար պայմանների ապահովման, խտրականության կանխարգելման կարևոր նախապայման և գրավական կարող է հանդիսանալ ոչ միայն տեղեկացված, իրազեկված լինելը, այլև տարբեր քաղաքացիական, տնտեսական, մշակութային և այլ ոլորտներում ներգրավվածությունը:

Հաշմանդամություն ունեցող կանանց հիմնախնդիրների արտացոլումը ՀԿ-ների գործունեության մեջ

Հետազոտական ծրագրի կարևորագույն նպատակներից էր հասկանալ, թե որքանով են Հայաստանյան ՀԿ-ները իրենց գործունեության մեջ կարևորում ՀՈՒԿ հիմնախնդիրների լուծումը և հետևում են այդ նպատակին իրենց ծրագրային ռազմավարությունը իրագործելիս:

Որպես հետազոտության առարկա ընտրվել են հետևյալ բաղադրիչները.

- ՀԿ առաքելությունը
- ՀԿ-ի կողմից իրականացվող վերջին երեք ավարտված կամ ընթացիկ ծրագրերի վերնագրերը (խոսքը գնում է վերջին երեք կնքված պայմանագրերի մասին)
- ՀԿ-ի կողմից իրականացվող վերջին երեք ծրագրերի նպատակների ձևակերպումները

Վերլուծվել են վերոհիշյալ ձևակերպումները, թե արդյոք դրանք պարունակում են հետևյալ բառերը՝ «կին», «հաշմանդամություն ունեցող անձ», «հաշմանդամություն ունեցող կին»: Հաշվարկվել են նաև «հաշմանդամությունը» անուղղակիորեն իմաստավորող արտահայտություններն, այնպիսիք, ինչպիսիք են՝ «ներառում», «ներառական կրթություն», «հատուկ կարիքներ», «սահմանափակ կարողություններ» և այլ:

ՀՈՒԿ հիմնախնդիրների արտացոլումը ՀԿ առաքելության ձևակերպման մեջ

Գնահատվել են հարցման մասնակից ՀԿ-ների առաքելությունների ձևակերպումները: Ինչպես երևում է Նկար 1.8-ում, ՀԿ-ների 80%-ի առաքելության սահմանման մեջ ուղղակի և անուղղակի ձևով արտահայտված են հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրները: Նրանցից միայն 15%-ը իրենց գործունեության ամենակարևոր արտահայտության մեջ շեշտել են կանանց կարիքների լուծմանն աջակցելու առաջնայնությունը:

Նկար 1.8 ՀՈՒԿ հիմնախնդիրների լուծման ուղղվածությունը ՀԿ-ների առաքելության ձևակերպման մեջ



Հարցմանը մասնակցող ՀԿ-ների 5%-ի առաքելության ձևակերպումը ընդհանրապես չի պարունակում վերոհիշյալ բառերից ոչ մեկը: Եվ ոչ մի ՀԿ իր առաքելության մեջ չի շեշտում հաշմանդամություն ունեցող կանանց հիմնախնդիրների առաջնայնությունը:

ՀՈՒԿ հիմնախնդիրների արտացոլումը ՀԿ-ների ծրագրային վերնագրերի ձևակերպման մեջ

Հետազոտական ծրագրի շրջանակում ուսումնասիրվել են ՀԿ-ների կողմից իրականացվող 47 ծրագիր: ՀԿ-ների ծրագրային անվանումների վերլուծությունը վկայում է, որ ՀԿ-ների ծրագրերի վերնագրերի 55.3%-ը արտահայտում է ՀՈՒԱ հիմնախնդիրների առաջնայնությունը:

Նկար 1.9. ՀՈՒԿ հիմնախնդիրեների արտացոլումը ծրագրային անվանումներում



Ինչպես երևում է Նկար 1.9-ում, ծրագրային վերնագրերի 10.6%-ի մեջ արտահայտված է կանանց հիմնախնդիրների կարևորությունը: Հաշմանդամություն ունեցող կանանց հիմնահարցերի աջակցմանն են ուղղված ծրագրերի միայն 2.1%-ը: Իսկ ծրագրերի 31.9%-ի անվանումներում չի արտահայտված ո՛չ կանանց, ո՛չ հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրները:

ՀՈՒԿ հիմնախնդիրների արտացոլումը ՀԿ-ների ծրագրային նպատակի ձևակերպման մեջ

Եթե կազմակերպությունների ծրագրերի անվանումներում համառոտ արտահայտվում են թիրախ խմբերի, գործողության կամ վերջնանպատակի ամենաազդեցիկ և արտահայտիչ գաղափարը, ապա ծրագրային նպատակների ձևակերպումների միջոցով ներկայացվում է ծրագրի համառոտ ռազմավարությունը՝ արդյունքի, միջոցների, թիրախի նկարագրության միջոցով:

Նկար 1.10. ՀՈՒԿ կանանց հիմնախնդիրների արտացոլումը ծրագրային նպատակների ձևակերպման միջոցով

Հետազոտության արդյունքում բացահայտվել է, որ ուսումնասիրության առարկա հանդիսացող ծրագրերի նպատակների 72.3%-ը շեշտում է հաշմանդամություն ունեցող անձանց՝ որպես իր գործունեության ուղիղ և ամենակարևոր թիրախ: Ծրագրերի 8.5%-ում առաջնային թիրախ են հանդիսանում կանանց հիմնախնդիրները: Ծրագրերի միայն 6.4%-ի ուղղվածությունն է հաշմանդամություն ունեցող կանանց հիմնահարցերը: Ծրագրերի 12.8%-ի նպատակը չի ներառում հետազոտության հետաքրքրություն ներկայացնող առարկան: (Տե՛ս Նկար 1.10)

ՀԿ-ների ծրագրային համագործակցության գնահատումը

Հարցման մասնակից ՀԿ-ները բավականին ակտիվ համագործակցում են տարբեր ծրագրերի շրջանակներում: Վերլուծելով վերոհիշյալ ծրագրերը՝ բացահայտվել է, որ ՀԿ-ների 40.4%-ը համագործակցում են տեղական հասարակական կազմակերպությունների հետ: Նրանց 27.7%-ի գործընկերներն են հանդիսանում Հայաստանում գործող միջազգային կազմակերպությունները: Բավականին ակտիվ համագործակցում են ՀԿ-ների հետ նաև պետական կառույցները և ՏԻՄ-երը: Այսպես, օրինակ, ծրագրերի 8.5%-ում ծրագրային գործընկեր են հանդիսանում ՏԻՄ-երը, իսկ նույնքան ծրագրերում ՀԿ-ներին աջակցում են այլ պետական կազմակերպություններ, ինչպիսիք են մարզպետարանները, Զբաղվածության Պետական Ծառայությունը և տարածքային բաժանմունքները, այլ պետական կառույցներ: (Տե՛ս Նկար 1.11) Պետական կառույցների հետ

Նկար 1.11. Ծրագրային գործընկերություն



համագործակցությունը հիմնականում երկկողմանի է, և շատ հաճախ հենց պետական կառույցներն ու տեղական իշխանություններն են ստանում աջակցություն ՀԿ-ների կողմից:

Կարևոր է նաև Հայ Առաքելական Եկեղեցու ներգրավվածությունը խոցելի խմբերին ծառայությունների մատուցման գործում: Դրա մասին վկայում են հարցվող կազմակերպությունների 5%-ը: Շատ քիչ են ներառված բիզնես ոլորտի ներկայացուցիչները հասարակական ծառայությունների մատուցման ոլորտում, ինչը մեր հասարակության մշակութային մեծ բացերից է: ՀԿ-ներից միայն մեկն է նշում այնպիսի բիզնես կազմակերպության հետ համագործակցության փաստը, ինչպիսին է Օրանժ ընկերությունը: Հայաստանյան իրականության մեջ գործարար ոլորտի խոշոր ներկայացուցիչներից շատերը տարվա կտրվածքով պլանավորում և իրականացնում են բարեգործական գործունեություն, աջակցում են տարբեր խոցելի և կարիքավոր խմբերին: Սակայն հաճախ նման գործունեությունը իրականացվում է սեփական ուժերով՝ ուղղորդվելով սեփական մղումներով: Բիզնեսի ներկայացուցիչները պատրաստակամ են աջակցելու կարիքավորներին, սակայն նրանց և ՀԿ-ների, տարբեր բարեգործական կազմակերպությունների միջև կապը թույլ է՝ փոխվստահության մթնոլորտի թերի լինելու պատճառով: «Գործարար-ՀԿ» կապի ամրապնդման հարցում կարող է մեծ ներդրում ունենալ ՀԿ-ների գործունեության թափանցիկությունը, հանրային հաշվետվողականությունը, հիմնախնդիրների լայն լուսաբանումը, բիզնես ոլորտի ներկայացուցիչների ակտիվ ներգրավումը հասարակական կազմակերպությունների խորհուրդներում և այլ կառավարման մարմիններում:

Ծրագրերի 6.4%-ը իրականցվել է ՀԿ-ների ուժերով, առանց որևէ համագործակցության:

Ծրագրային ծառայություններից օգտվող թիրախ խմբերի բնութագրերը

Հարցման մասնակից ՀԿ-ների գործունեության թիրախ խմբերի քանակական բնութագրերը բաշխված են հավասարաչափ: Կան կազմակերպություններ, որոնք շատ փոքր մարդկային խմբերի հետ են աշխատում, իսկ կան կազմակերպություններ, որոնք կազմակերպում են իրենց աշխատանքը մեծ քանակով շահառուների հետ: (Տե՛ս Նկար 1.12)

Նկար 1.12. Ծրագրային շահառուների քանակը



Կազմակերպությունների 25%-ի թիրախ խմբերի քանակը չի գերազանցում 50 շահառուն: 15%-ը աշխատում է 51-100 թվաքանակով շահառուների հետ: ՀԿ-ների 20%-ի թիրախ խմբերի թվաքանակը տատանվում է 100-ից 200-ի միջև: Նույնքանն աշխատում են 201-500 թվաքանակով մարդկային խմբերի հետ: Իսկ հարցվող ՀԿ-ների 10%-ի գործունեության մեջ ներգրավված են 500-1500 թվով շահառուներ:

Ինչպես վկայում են հարցման արդյունքները, մեծ թվով մարդկային խմբերի հետ աշխատող ՀԿ-ները հիմնականում որպես գործունեության ոլորտ նշում են իրազեկումը, տարբեր տեղեկատվական ծառայությունների տրամադրումը, ինչպես նաև շահերի և իրավունքների պաշտպանության գործընթացը: Նման տեսակի գործունեությունը հազվադեպ է ենթադրում անհատական աշխատանք թիրախ խմբերի հետ, դեմ առ դեմ հանդիպումներ: Ավելի քիչ թվաքանակով շահառուների հետ աշխատող ՀԿ-ների ծառայությունները մեծամասամբ ներառում են անհատական մոտեցում, սոցիալական ավելի բազմազան գործառույթների

իրականացում և գործընթացների կազմակերպում: ՀՈՒԱ և, մասնավորապես, ՀՈՒԿ շրջանում ծառայություններ մատուցող կազմակերպությունների շրջանակում, իհարկե, կարևոր են երկու տեսակի ծառայությունները՝ և՛ լայնամասշտաբ, ներառելով քաղաքականության մարդկային մեծ զանգվածների ներազդող գործողություններ, և՛ ոչ պակաս կարևոր են այն կազմակերպությունների ծառայությունները, որոնք դեմ առ դեմ աշխատում են քիչ թվով մարդկանց հետ և տրամադրում են բնույթով ավելի բազմազան աջակցություն:

Կանանց ներգրավվածությունը հետազոտության մասնակից ՀԿ-ի ծրագրերում

Հարցմանը մասնակցող ՀԿ-ների 10%-ը նշում են, որ իրենց վերջին երեք ծրագրերի բոլոր շահառուները (100%-ը) իգական սեռի ներկայացուցիչներ են: (Տե՛ս Նկար 1.13)

ՀԿ-ների 15%-ը նշում է, որ կանայք և աղջիկները հանդիսանում են իրենց ծառայություններից օգտվող խմբերի ճնշող մեծամասնությունը՝ 76-99%-ը: Մասնակիցների 35%-ի համար շահառուների գենդերային կազմը գրեթե համընկնում է համայնքների բնակչության գենդերային պատկերի հետ, քանի որ սեզոնային միգրացիայի արդյունքում շատ համայնքներում տարվա մեծ մասը կանանց թիվը տատանվում է 50%-75%: Հարցման մասնակիցների 25%-ի համար իգական սեռի ներկայացիցները հանդիսանում են շահառուների ընդհանուր թվի համեմատությամբ փոքրամասնություն:

Նկար 1.13. Կանայք որպես ծրագրերի թիրախ խումբ



ՀՈՒԿ ներգրավվածությունը հետազոտության մասնակից ՀԿ-ի ծրագրերում

Հարցման մասնակից ՀԿ-ներից ոչ մեկն իր վերջին երեք ծրագրերում ամբողջությամբ՝ այսինքն 100%-ով, չի ներառել հաշմանդամություն ունեցող կանանց: ՀԿ-ների 30%-ը նշում է, որ իրենց շահառուների գերակշռող մեծամասնությունը (51-99%) հաշմանդամություն ունեցող կանայք են: (Տե՛ս Նկար 1.14)

Կազմակերպությունների 25%-ը նշել է, որ իրենց թիրախ խմբերի 26-50%-ը ՀՈՒԿ են: Նույնքանը հաստատել է, որ շահառուների թվում կան ՀՈՒԿ, սակայն նրանք կազմում են իրենց խմբերի քիչ հատվածը՝ 1-25%-ը: Հարցման մասնակիցների 5%-ը նշել են, որ չունեն իրենց շահառուների կազմում ՀՈՒԿ:

Նկար 1.14. Ծրագրի ՀՈՒԿ շահառուները



ՀԿ-ների ՀՈՒԿ վերաբերյալ տեղեկատվական բազան

Հարցման արդյունքները վկայում են, որ չնայած այն հանգամանքին, որ ՀԿ-ներից յուրաքանչյուրը նշում է, որ հավաքագրում և պահում է շահառուների վերաբերյալ տեղեկատվական բազա, սակայն հաշմանդամության տեսակի, բնույթի վերաբերյալ ոչ բոլորն ունեն համապատասխան տեղեկություններ:

Այն կազմակերպությունները, որոնք տիրապետում են թիրախ խմբերի ժողովրդագրական, հաշմանդամության տեսակների և բնույթի վերաբերյալ ավելի համակարգված և մանրամասն տեղեկատվությանը, ներկայացրել են իրենց ՀՈՒԿ շահառուների բաշխվածությունը ըստ հաշմանդամության տեսակների: (Տե՛ս Նկար 1.15)

Նկար 1.15. Շահառուների հաշմանդամության տեսակը



Հարցման արդյունքները վկայում են, որ ներկայումս Հայաստանում գործող և հաշմանդամության հիմնախնդիրներով զբաղվող ՀԿ-ները հիմնականում զբաղվում են որոշակի տեսակի հաշմանդամություն ունեցող կանանց հիմնախնդիրներով: Կան հաշմանդամության տեսակներ, որոնք մեծամասամբ դուրս են մնում ՀԿ-ների ուշադրությունից: Հիմնականում ծրագրերում ներգրավված են ֆիզիկական, առողջական և հոգեբանասոցիալական խնդիրներ ունեցող ՀՈՒԿ: Օրինակ, լսողական խնդիրներով կանայք ավելի են ներգրավված ծրագրերում, քան տեսողական խնդիրներ ունեցողները: Կամ, ծրագրերում ավելի շատ են մտավոր խնդիրներով կանայք, քան՝ հոգեկան: ՀՈՒԿ շրջանում հաշմանդամության տարբեր տեսակները նույնպես անհավասարաչափ են բաշխված, ինչը նույնպես արտահայտվում է շահառուների կազմի մեջ:

ՀԿ-ներում ֆիզիկական մատչելիության պայմանների գնահատումը

Հարցման մասնակից ՀԿ-ներից միայն մեկն է նշել, որ գրասենյակում կամ կենտրոնում ապահովել է ՀՈՒԱ համար ֆիզիկական մատչելիությունն ապահովող բոլոր պայմանները: Հարցման մասնակից ՀԿ-ների մեծամասնությունը՝ 65%-ը ունեն թեքահարթակներ, 40%-ը նշում է, որ առկա են ֆիզիկական խնդիրներ ունեցող անձանց համար հարմարեցված սանհանգույցներ, ինչպես նաև հատուկ դիդակտիկ պարագաներ: Հաշմանդամություն ունեցող անձանց տեղափոխման համար ՀԿ-ների 30%-ն ունի հատուկ հարմարեցված փոխադրամիջոց: ՀԿ-ներում նաև առկա են հատուկ մասնագետներ՝ 30%-ը շահառուների համար տրամադրում է Բրայլյան այբուբենի մասնագետների ծառայություններ, 25%-ը՝ ժեստերի լեզվի: Հարցման մասնակից ՀԿ-ների նույնքանը կիրառում են օժանդակ տեխնոլոգիաներ: (Տե՛ս Նկար 1.16)

Նկար 1.16. ՀԿ-ների աշխատանքային տարածքի մատչելիության գնահատումը



ՀՈՒԿ առաջնային կարիքների գնահատումը

Այն հարցին, թե որն է հաշմանդամություն ունեցող կանանց ամենաառաջնային կարիքը, հարցմանը մասնակցող ՀԿ-ների գրեթե կեսը՝ 45%-ը պատասխանել է, որ ՀՈՒԿ անհրաժեշտ է աշխատանք,



զբաղվածություն: (Տե՛ս Նկար 1.17) Հարցվողների 30%-ի համար առաջնայինը ֆիզիկական մատչելիության ապահովումն է: ՀԿ-ների 20%-ը նշել է, որ շահառու ՀՈՒԿ նախ և առաջ անհրաժեշտություն ունեն իրենց

առողջական խնդիրների լուծման՝ բուժման, վիրահատությունների և վերականգնման գործընթացի կազմակերպման:

ՀԿ-ների կողմից նաև կարևորվել է ընտանեկան ջերմ և հոգատար մթնոլորտի առկայությունը (20%), ներառման խնդիրը (15%), տեղեկատվության ապահովումը (15%), ինչպես նաև անվտանգության խնդիրը, ուղեկցողի տրամադրումը, ընտանիք կազմելու հնարավորությունը, հավասար հնարավորությունների ապահովումը, սպորտով զբաղվելը և այլն:

2. ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՌՆՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

«Մեր ձայները-մեր իրավունքները» հետազոտական ծրագրի կարևորագույն նպատակներից է ուսումնասիրել և գնահատել Հայաստանում ապրող ՀՈՒԿ դրությունը, հիմնախնդիրները, նրանց նկատմամբ անհավասարության, խտրականության և բռնությունների բացահայտ և թաքնված դրսևորումների, ռիսկերի գնահատումը:

Ուսումնասիրությունը իրականացվել է ազգային մակարդակով՝ ընդգրկելով ՀՀ 10 մարզերը և մայրաքաղաք Երևանը: Հարցմանը մասնակցել են թվով 150 ՀՈՒԿ: Հարցումը անցկացվել է 2015 թ. սեպտեմբերի 24-ից մինչև հոկտեմբերի 10-ը ընկած ժամանակահատվածում:

Հարցվողների ժողովրդագրական բնութագրերը

Հետազոտական ծրագրի մասնակիցների ընտրանքի համար որպես կարևորագույն չափորոշիչներ դիտարկվել են հետևյալ բնութագրերը՝

- Պաշտոնապես վկայագրված հաշմանդամություն ունենալու փաստը
- Իգական սեռի ներկայացուցիչ հանդիսանալը
- Աշխատանքային տարիքային խմբում լինելը (հարցմանը մասնակցել են 18-65 տարեկան կանայք)
- ՀՀ-ում մշտական բնակվելը:

Հարցման մասնակից ՀՈՒԿ հիմնական կատեգորիաները

Առանձնացվել են 4 հիմնական հարցվողների կատեգորիաներ՝ հիմնված տարիքի և բնակավայրի տեսակի վրա:

1. Քաղաքաբնակ 18-40 տարեկան կանայք
2. Գյուղաբնակ 18-40 տարեկան կանայք
3. Քաղաքաբնակ 41-65 տարեկան կանայք
4. Գյուղաբնակ 41-65 տարեկան կանայք

Նկար 2.1 Հարցվողի կատեգորիան



Հիմնվելով մարդահամարի տվյալների վրա և հաշվի առնելով ՀՀ բնակչության համամասնությունը ըստ գենդերային բաժանման, մարզերի և ՀՀ Աշխատանքի և Սոցիալական Հարցերի Նախարարության տրամադրված տվյալները ՀՈՒԿ քանակի, բնակավայրերի վերաբերյալ՝ հաշվարկվել են հարցման մասնակիցների ընտրանքը: Տե՛ս Նկար 2.1:

Այսպիսով, հարցմանը մասնակցել են 150 ՀՈՒԿ, որի 42%-ը կազմում են քաղաքաբնակ 41-65 տարեկան հաշմանդամություն ունեցող կանայք, 32.7%-ը՝ գյուղաբնակ ՀՈՒԿ, և 12.7-ական տոկոսը ներկայացված են 18-40 տարեկան քաղաքներում և գյուղերում բնակվող կանայք:

Հարցման մասնակից ՀՈՒԿ կրթական բնութագրերը

Հարցման մասնակիցների մոտ 16%-ը չունի ավարտուն միջնակարգ կրթություն: Ընդ որում, նրանցից 4%-ը ընդհանրապես չի մասնակցել կրթական որևէ գործընթացի, ՀՈՒԿ 2%-ը սահմանափակվել է միայն տարրական կրթության մակարդակով, իսկ 10%-ն ունի թերի միջնակարգ կրթություն:

Միջնակարգ կրթություն ունեն մասնակիցների 30%-ը, իսկ 34%-ն ունեն միջնակարգ մասնագիտական կրթություն: ՀՈՒԿ կանանց շրջանում 12.7%-ն ունի բարձրագույն կրթություն:

Հարցման մասնակից ՀՈՒԿ կրթական մակարդակի ուսումնասիրությունը բացահայտում է ոլորտի սահմանափակ լինելու փաստը՝ հաշմանդամությամբ պայմանավորված: Ամենահասանելի կրթական մակարդակը հանդիսանում է միջնակարգ և միջնակարգ մասնագիտական կրթությունը: Բավականին մեծ է նաև կրթությունից դուրս մնացած կանանց թիվը: Տե՛ս Նկար 2.2:

Նկար 2.2 Հարցվողի կրթական մակարդակը



Հարցման մասնակից ՀՈՒԿ ամուսնական կարգավիճակը

Հարցման մասնակից ՀՈՒԿ յուրաքանչյուր 3-ից միայն մեկն է ամուսնացած՝ 38%-ը: Շուրջ 40%-ը երբեք ամուսնացած չի եղել:



ՀՈՒԿ տնային տնտեսությունների անդամների թիվը

Հետազոտության արդյունքները վկայում են, որ ՀՈՒԿ 13%-ը ապրում է միայնակ և չունի ընտանիք, չունի նաև խնամակալ: Իսկ 14.75%-ը ապրում է երկանդամ ընտանիքներում: 37.35%-ի ընտանիքի անդամների թվաքանակը 3-4-ն է: Բազմանդամ ընտանիքներում ապրում են հարցվողների մնացած 35%-ը:

Նկար 2.4 Տնային տնտեսության անդամների թիվը



ՀՈՒԿ տնային տնտեսությունների գենդերային բնութագրերը

Հարցման շրջանակներում ուսումնասիրվել է ՀՈՒԿ ընտանիքների գենդերային կազմը: Հարցման մասնակից ընտանիքներում ապրող կանանց մեծամասնության՝ 50.8%-ի ընտանիքներում տղամարդիկ կազմում են քանակական փոքրամասնություն: Իսկ կանանց 20.45%-ը նշում են, որ իրենց ընտանիքները միասեռ են՝ կազմված են միայն իգական սեռի ներկայացուցիչներից:

Նույնքան ՀՈՒԿ ընտանիքներում գենդերային բալանսը պահպանված է՝ կանանց և տղամարդկանց քանակը հավասար է: Եվ միայն 8.3% կանայք նշում են, որ իրենց ընտանիքներում տղամարդիկ կազմում են գենդերային մեծամասնություն: Տե՛ս Նկար 2.5:



ՀՈՒԿ ընտանիքներում զբաղվածության բնութագիրը

ՀՈՒԿ տնային տնտեսությունների ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ հաշմանդամություն ունեցող կանայք ապրում են բարդ սոցիալ-տնտեսական իրավիճակում գտնվող ընտանիքներում: Ինչպես երևում է Նկար 2.6-ում, ՀՈՒԿ յուրաքանչյուր երրորդը՝ 34.8%-ը, ապրում է որևէ աշխատող չունեցող ընտանիքում: Գրեթե նույնքան՝ 36.4%-ի ընտանիքներում կա միայն մեկ աշխատող: ՀՈՒԿ 10.6%-ը ապրում է մեկից ավելի աշխատող ունեցող ընտանիքներում, սակայն նրանք չաշխատող ընտանիքի անդամների համեմատությամբ կրկնակի քիչ են: Միայն հաշմանդամություն ունեցող կանանց 3.8%-ի ընտանիքի բոլոր անդամները աշխատող են:

Նկար 2.6 Տնային տնտեսության աշխատող անդամների քանակը



ՀՈՒԿ ընտանիքների անչափահաս անդամների առկայությունը

ՀՈՒԿ ընտանիքների գերակշռող մեծամասնությունը՝ 52.3%-ը, ապրում է առանց անչափահասների:
Տե՛ս Նկար 2.7

Նկար 2.7 Տնային տնտեսության անչափահաս անդամների թիվը



ՀՈՒԿ ընտանիքներում տնային տնտեսության գլխավորը

Հարցման մասնակից ընտանիքում ապրող յուրաքանչյուր երեքից մեկ ՀՈՒԿ (36.4%) գլխավորում է իրենց տնային տնտեսությունը: Տե՛ս Նկար 2.8:

Հաշմանդամություն ունեցող կանանցից, ովքեր փաստացի չեն հանդիսանում տնային տնտեսության ղեկավարներ, գրեթե կեսը՝ 41.7%-ը, ունեն ընտանիքներում կարևոր դերակատարում, քանի որ հանդիսանում են SS ղեկավարի կինը: Հարցվողների 38.1%-ը նշել է, որ SS ղեկավարը իրենց հայրն է: 7.1%-ի որդին է հանդիսանում ընտանիքի ղեկավարը: Տե՛ս Նկար 2.9:

Նկար 2.8 Հարցվողի տնային տնտեսության գլխավոր լինելը



Նկար 2.9 Հարցվողի կապը տնային տնտեսության ղեկավարի հետ



ՀՈՒԿ խնամքի տակ գտնվող անձերի քանակը

Ինչպես երևում է Նկար 2.10-ում, ոչ միայնակ հարցված ՀՈՒԿ 24.2%-ի խնամքի տակ է գտնվում մեկ անձ, 14.4%-ը նշել է, որ պատասխանատու է երկու անձի խնամքի համար:

Նկար 2.10 Հարցվողի խնամքի տակ գտնվող անձանց քանակը



ՀՈՒԿ մասնակցությունը ընտանեկան որոշումների կայացման գործընթացներում

Հարցման արդյունքները վկայում են, որ ընտանիքներում ապրող ՀՈՒԿ միայն 28%-ն է նշում, որ իրենց ընտանիքներում հիմնական որոշում կայացնողը կինն է: Նույնքանի ընտանիքներում որոշումների կայացման գործընթացը տեղի է ունենում ընտանիքի բոլոր անդամների հավասարաչափ մասնակցությամբ: Հարցվողներից ոչ մեկը չի նշել, որ կանայք հնարավորություն չունեն մասնակցելու որոշումների կայացման գործընթացին: Կանանց 36.3%-ը նշել է, որ իրենց ընտանիքներում վերջին խոսքը որոշման ընդունման մեջ պատկանում է տղամարդուն, սակայն նրանցից 28%-ը (Տե՛ս Նկար 2.11) ակտիվ մասնակցություն է ցուցաբերում քննարկմանը, իսկ ՀՈՒԿ 8.3%-ը միայն մասնակիորեն է մասնակցում գործընթացին:

2.11 Կանանց ներգրավվածությունը ընտանեկան որոշումների կայացման գործընթացում



Ընտանիքի մասնակցությունը ՀՈՒԿ վերաբերող որոշումների կայացման գործընթացին

Այն հարցին, թե ընտանիքի անդամները արդյոք մասնակցում են անձամբ հարցվողներին վերաբերող որոշումների կայացման գործընթացին, ՀՈՒԿ 12.2%-ը նշել է, որ բոլոր որոշումներում ընտանիքը մշտապես ազդում է հարցվողին անձնապես վերաբերվող որոշումների կայացման վրա: ՀՈՒԿ 22%-ը նշել է, որ ընտանիքի անդամները հաճախ են միջամտում տվյալ գործընթացին, եթե ոչ մշտապես: Հարցման մասնակից ոչ միայնակ ապրող հաշմանդամություն ունեցող կանանց 34.8%-ի ընտանիքներում անդամների ազդեցությունը ավելի քիչ է. նրանք մասնակցում են անձնական որոշումների կայացմանը միայն հազվադեպ: Եվ մասնակիցների 28%-ի գնահատմամբ, ընտանիքը ընդհանրապես չի մասնակցում այդ հարցերի քննարկմանը և ՀՈՒԿ կայացնում են սեփական որոշումները ինքնուրույն: Տե՛ս Նկար 2.12:

Նկար 2.12 Ընտանիքի անդամների ազդեցությունը անձամբ հարցվողին վերաբերող որոշումների կայացման հարցում



Ընտանիքի ազդեցությունը ՀՈՒԿ անձնական կոնտակտների, կապերի պահպանման հարցում

Ընդհանուր առմամբ, ՀՈՒԿ ընտանիքները նաև ներգրավված են հարցվողների անձնական կոնտակտների, կապերի պահպանման հարցում: Այսպես, օրինակ, հարցման մասնակիցների 24.2%-ը բնութագրում է ընտանիքի մասնակցությունը դրական առումով, նշելով, որ ընտանիքն ամեն կերպ խրախուսում է արտաքին կոնտակտների պահպանումը: ՀՈՒԿ 19.7%-ը գնահատում է ընտանիքի մասնակցությունը ընտրովի՝ այսինքն, ընտանիքը ինքն է որոշում, թե որ կոնտակտներն անհրաժեշտ է խրախուսել, իսկ որոնք կարող է արգելել: Հարցման մասնակիցների 2.3%-ը խոստովանում է, որ ընտանիքը դեմ է ամեն տեսակի շփումներին: Հարցվողների 5.3%-ը հստակ պատասխան չի տալիս: Եվ միայն կանանց 48.5%-ը ազատ է կառուցելու իր անձնական շփումները:



Այս հարցում կարևոր է հաշվի առնել հայ ավանդական հասարակության մոտեցումը կանանց և աղջիկների նկատմամբ, որ ընտանիքի անդամների կողմից կանանց արտաքին աշխարհի հետ հաղորդակցումը որոշակի վերահսկողության տակ է գտնվում: Տե՛ս Նկար 2.13:

Խորհրդային ժամանակաշրջանում ընդունված չէր խոսել հաշմանդամության խնդրի մասին: Եվ թվում էր, թե հասարակության մեջ թվաքանակով շատ քիչ են ՀՈՒԿ: ՀՈՒԿ արտաքին աշխարհի հետ կապը պահելու, տանից դուրս գալու հարցում ընտանիքները հանդիսանում էին խոչընդոտ՝ չխրախուսելով կանանց արտաքին աշխարհի հետ կապեր հաստատելու և պահպանելու ձգտումը: Ներկայումս ակնհայտ է, որ կա որոշակի

դրական տեղաշարժ: Հարցման մասնակիցների 41.7%-ի վստահմամբ ընտանիքը ընդհանրապես չի միջամտում ՀՈՒԿ հնարավոր տեղաշարժին: 32.5%-ը նշում է, որ ընտանիքը ամեն կերպ խրախուսում է իրենց արտաքին աշխարհի հետ կապերի պահպանումը և աջակցում է հնարավոր տեղաշարժերին: Տե՛ս Նկար 2.14:

Նկար 2.14 Ընտանիքի մասնակցությունը հարցվողի արտաքին աշխարհի հետ կապերի պահպանման հարցում



Հարցման մասնակիցների 21.2%-ի ընտանիքները ակտիվ մասնակցում են ՀՈՒԿ արտաքին աշխարհի հետ կապերի պահպանման հարցում: Եվ 0.8%-ը նշում է, որ ընտանիքը դեմ է ցանկացած տեղաշարժին:

ՀՈՒԿ արտաքին աշխարհի հետ կապեր պահպանելու հաճախականությունը

Հարցման մասնակիցների մեծամասնությունը՝ 63.3%-ը, հնարավորություն ունի յուրաքանչյուր օր տանից դուրս գալ: ՀՈՒԿ 13.3%-ը նշում է, որ հիմնականում առիթ է առաջանում շաբաթական մեկ անգամ տանից դուրս գալու: Ինչպես երևում է Նկար 2.15-ում, հարցվողների 10%-ը դուրս գալու հնարավորություն ունի ավելի

հազվադեպ, քան շաբաթը մեկ անգամ: Հարցման մասնակիցների 10%-ը շատ հազվադեպ է դուրս գալիս: Իսկ 2%-ը նշում է, որ ընդհանրապես տանից դուրս չի գալիս:

Նկար 2.15 Հարցվողի տանից դուրս գալու հաճախականությունը



ՀՈՒԿ համար տեղաշարժվելու հիմնական խոչընդոտները

Այն հարցին, թե ինչը կարող է տանից դուրս գալու անհրաժեշտության դեպքում խոչընդոտ հանդիսանալ, հարցվող ՀՈՒԿ 72.7%-ը նշել է իրենց ֆիզիկական վիճակը, 39.4%-ի համար դա ուղեկցողի բացակայությունն է: Հաշմանդամություն ունեցող անձանց համար ընդհանրապես տեղաշարժը, տանից դուրս գալը լրացուցիչ ջանքերի, ռեսուրսների և հատուկ միջոցների անհրաժեշտություն ունի: Այսպես, հարցվողների 33.3%-ը նշում է դրամի բացակայությունը որպես կարևոր խոչընդոտ, 24.2%-ի համար կարևոր է մատչելի փոխադրամիջոցի առկայությունը, 12.1%-ի համար անհրաժեշտ են հատուկ միջոցներ անվտանգ տեղաշարժի համար՝ սարքավորումներ, պարագաներ, սայլակներ, լսողական սարքեր: ՀՈՒԿ 3%-ը նշել է սեզոնային հագուստի կարիքը որպես առաջնային: Կարևոր է նշել, որ նույնքան կանայք նշել են, որ կարիք ունեն թույլտվության, առանց որի չեն կարող դուրս գալ:

Այս հարցում մեծ խնդիր է հանդիսանում ՀՈՒԿ շրջանում մոտիվացիայի, ցանկության բացակայության հարցը: Բավականին անհանգստացնող կարող է համարվել այն փաստը, որ հարցմանը մասնակցող յուրաքանչյուր 3 կանանցից մեկը՝ 33.3%-ը տանից դուրս չի գալիս, որովհետև չունի ցանկություն: Եթե այս թվին ավելացնենք նաև 9.1% կանանց, ովքեր գտնում են, որ առիթ և կարիք չունեն տանից դուրս գալու, ապա ստացվում է, որ ՀՈՒԿ բավականին մեծ զանգված դուրս է մնում հանրային, հասարակական իրադարձություններից՝ գերադասելով պարփակվել իրենց բնակարանների նեղ շրջանակներում: Տե՛ս Նկար 2.16:

Նկար 2.16 Հարցվողի տանից դուրս չգալու պատճառները



ՀՈՒԿ փոխադրամիջոցներից օգտվելը

Հարցման մասնակից ՀՈՒԿ խիստ անհրաժեշտության դեպքում օգտվում են տաքսիների ծառայություններից՝ 60.7%-ը: Նրանցից 58.7%-ը ժամանակ առ ժամանակ օգտվում է անձնական կամ ծանոթների մեքենաներից: ՀՈՒԿ 56%-ը օգտվում է նաև երթուղային տաքսիներից, իսկ 52.7%-ը՝ ավտոբուսից: Տե՛ս Նկար 2.17:

Նկար 2.17 Հարցվողի փոխադրամիջոցներից օգտվելը



Փոխադրամիջոցների մատչելիությունը ՀՈՒԿ համար

Այն հարցին, թե որքանով են տարբեր փոխադրամիջոցները մատչելի ՀՈՒԿ համար, հարցման մասնակիցների մեծամասնությունը՝ 64.7%-ը նշում է, որ ամենամատչելին տաքսին է, մեքենան՝ 62.7%: Հարցվածների կեսից ավելին՝ 50.7%, նշել է նաև երթուղային տաքսին, 48%-ը՝ ավտոբուսը, 24%-ը՝ գնացքը և երևանաբնակ ՀՈՒԿ 22.7%-ը մետրոն են համարել մատչելի փոխադրամիջոց: Տե՛ս Նկար 2.18:

Նկար 2.18 Փոխադրամիջոցների մատչելիությունը ՀՈՒԿ համար



Տեղեկատվական միջոցների մատչելիությունը ՀՈՒԿ համար

Հաշմանդամություն ունեցող կանանց համար արտաքին աշխարհի հետ կապերի պահպանման հարցում կարևոր դեր են խաղում նաև տեղեկատվական ռեսուրսների մատչելիությունը և հասանելիությունը: Այս խնդրի ուսումնասիրությունը հնարավորություն կտա ավելի նպատակային դարձնել ՀՈՒԿ շրջանում իրազեկման մեխանիզմները, անհրաժեշտ տեղեկատվության տարածման գործընթացը դարձնել ավելի արդյունավետ: Այսպես, օրինակ, այն հարցին, թե որ հիմնական լրատվամիջոցներն են հանդիսանում ՀՈՒԿ համար հիմնական տեղեկատվության աղբյուր, հարցման մասնակիցների ճնշող մեծամասնությունը՝ 80.7%-ը նշում է

հեռուստատեսությունը: Վերջինս լավագույն և ամենամատչելի լրատվամիջոցն է, որտեղ ձայնային և տեսողական ազդակների զուգակցումը ապահովում է ՀՈՒԿ համար տեղեկատվության մատչելիություն և հասանելիություն:



Հարցման արդյունքները բացահայտեցին, որ ժամանակակից տեղեկատվական միջոցները ՀՈՒԿ համար մեծամասամբ անհասանելի են: Սա լուրջ խնդիր է, քանի որ սահմանափակ տեղաշարժման հնարավորություններ և կոնտակտների նեղ շրջանակ ունեցող կանանց համար անհատական օգտագործման դյուրակիր ինֆորմացիոն միջոցները կարող են հասանելի դարձնել իրազեկման, տեղեկատվության,

հաղորդակցման և ժամանցի հնարավորությունները: Այսպես, հեռուստացույցի տնօրինումը հասանելի է հարցման մասնակիցների 78%-ին, բջջային հեռախոս ունեն հարցվողների միայն 70%-ը: Կարող է հարց առաջանալ, որ լսողության խնդիրներ ունեցող կանայք չեն կարող օգտվել հեռախոսից, սակայն բջջային հեռախոսակապը մատչելի է հաղորդագրության և տեսազանգի ծառայության, տեղեկատվություն փոխանակելու տեսանկյունից: Հարցման մասնակիցների 38%-ը օգտվում է քաղաքային հեռախոսակապի ծառայություններից, 11%-ը ունի պլանշետներ, որոնցից շատ հեշտ է օգտվել, 10%-ը ունի անհատական օգտագործման համակարգիչներ, իսկ կանանց 9%-ը՝ դյուրակիր համակարգիչներ (նոութբուկեր): Նման տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը հնարավորություն կտա մատչելի կերպով օգտվել ինֆորմացիոն ծրագրերից, զարգացնել տարբեր հմտություններ և ձեռքբերել հնարավորություններ: Տե՛ս Նկար 2.20:

Նկար 2.20 Սեփական օգտագործման տեղեկատվական միջոցներ



ՀՈՒԿ իրավունքների վերաբերյալ իրազեկության գնահատումը

Այս հարցի հետ անմիջականորեն կապված է ՀՈՒԿ իրազեկման մակարդակը: Հարցման մասնակից կանանց միայն 16.7%-ն է իրեն համարում ՀՈՒԿ իրավունքների վերաբերյալ իրազեկ, տեղեկացված: Հաշմանդամություն ունեցող կանանց գերակշռող մասը կարիք ունի պարբերաբար թարմացվող տեղեկատվության տրամադրման: 40.7% ընդհանրապես իրազեկ չէ հաշմանդամություն ունեցող անձնանց իրավունքների վերաբերյալ, իսկ 41.2%-ը նշում է, որ իրազեկ է միայն մասամբ: Տե՛ս Նկար 2.21:

Նկար 2.21 ՀՈՒԿ իրավունքների վերաբերյալ իրազեկվածություն



ՀՈՒԿ իրավունքների վերաբերյալ տեղեկացվածության աղբյուրները

Հարցվողների կողմից (31%), որպես ՀՈՒԿ իրավունքների վերաբերյալ հիմնական տեղեկատվության աղբյուր, նշվում են քաղաքացիական հասարակության ինստիտուտները: Հարցվողների 29.9%-ը լրատվամիջոցներով հրապարակվող պաշտոնական լրահոսը նշում է որպես երկրորդ կարևոր տեղեկատվական ուղի:

Նկար 2.22 ՀՈՒԿ իրավունքների տեղեկացվածության հիմնական աղբյուրները



ՀՈՒԿ զբաղվածության գնահատումը

ՀՈՒԿ շրջանում զբաղվածության գնահատման համար ուսումնասիրվել են վերջին 12 ամիսների ընթացքում հարցվողների կողմից իրականացրած և դրամական կամ նյութական փոխհատուցում ստացած աշխատանքները, ծառայությունները: Հարցման 3 մասնակիցներից միայն մեկը՝ 35.3%-ը, տարվա կտրվածքով իրականացրել է փոխհատուցվող գործունեություն:

Նկար 2.23 Փոխհատուցվող աշխատանք



ՀՈՒԿ եկամուտների գնահատումը

Հարցման արդյունքները վկայում են, որ այն նվազաթիվ ՀՈՒԿ, ովքեր ունեն զբաղվածություն և որոնց գործունեությունը նյութապես՝ դրամական և ապրանքային ձևով փոխհատուցվում է, հիմնականում հավակնում են և ունեն նվազագույն եկամուտ: Զբաղվածություն ունեցող հարցվողների ճնշող մեծամասնության՝ 83%-ի եկամուտը չի գերազանցում 75000 դրամը: Ընդ որում, 62.3%-ի եկամուտը ցածր է նվազագույն աշխատավարձի շեմից՝ կազմում է մինչև 50000 դրամ: Այսպես, օրինակ, զբաղված կանանց 18.9% վերջին եկամտի չափը նշում է 15000 դրամից ցածր: Հարցվողների 15.1%-ը նշում են, որ իրենց եկամտի չափը չի գերազանցում 25000 դրամը: Հարցվողների 22.6%-ի աշխատանքի դիմաց փոխհատուցման չափը տատանվում է 36000-50000 դրամ: 20.8%-ը նշել է եկամտի չափը մինչև 75000 դրամը: Տե՛ս Նկար 2.24: Զբաղվածություն ունեցող ՀՈՒԿ 1.9%-ի ծառայության դիմաց վերջին ստացած եկամուտը չի գերազանցում 90000 դրամը, 3.8%-ը՝ 120000 դրամը, իսկ 5.7%-ը նշել է

121000-150000 դրամը: Միայն մեկ հարցված և զբաղվածություն ունեցող կին նշել է, որ իր վերջին վաստակը գերազանցել է 301000 դրամը:

Նկար 2.24 Վերջին փոխհատուցվող աշխատանքի վաստակի չափը



	մինչև 15000 դրամ	16000-25000 դրամ	26000-35000 դրամ	36000-50000 դրամ	51000-75000 դրամ	76000-90000 դրամ	91000-120000 դրամ	121000-150000 դրամ	301000-ից բարձր	ՉՊ
Ряд1	18,90%	15,10%	5,70%	22,60%	20,80%	1,90%	3,80%	5,70%	1,90%	1,90%

Ինչպես երևում է Նկար 2.25-ում, 58.5%-ի վերջին վաստակը հանդիսացել է ամսական ծառայության փոխհատուցում: Կանանց 17%-ի եկամուտը կազմել է իր սեզոնային վաստակը: Մասնակիցների 7.5%-ը եկամուտ է ստանում օրական կտրվածքով: Իսկ 3.8%-ը նշել է իր շաբաթական վաստակը:

Նկար 2.25 Վերջին փոխահատուցվող աշխատանքի ժամանակահատվածը



Այն հարցին, թե որքանով է բավարարում ամսական եկամուտը իրենց ամենաառաջնային կարիքների բավարարմանը, հարցման մասնակիցների մեծամասնությունը՝ 52%-ը նշել է, որ եկամուտը ընդհանրապես չի բավարարում իրենց անձնական կարիքների համար: Կանանց 24%-ը նշել է, որ եկամուտը հիմնականում չի բավարարում: 18.7%-ը չեզոք պատասխան են տվել՝ նշելով, որ եկամուտը ոչ բավարարում է, ոչ էլ չի բավարարում:



Ինչպես երևում է Նկար 2.26-ում, հարցված կանանց միայն 1.3%-ն է իրեն համարում լիովին բավարարված իր եկամտի չափով, իսկ 2.7%-ը նշել է, որ հիմնականում է բավարարված իր եկամտի չափով:

Այն հանգամանքը, որ հաշմանդամություն ունեցող կանանց եկամուտը մեծամասամբ չի ծածկում ամենատարրական կարիքները, Հայաստանում ապրող ՀՈՒԿ ամենամեծ խնդիրն է, քանի որ ՀՈՒԱ ունեն լրացուցիչ կարիքներ՝ հավելյալ ծառայություններից, փոխադրման, բուժական ծառայություններից օգտվելու կարիքներ: Եվ ցածր եկամուտը հանդիսանում է ամենամեծ բռնության և խտրականության ռիսկը, քանի որ կրկնակի խոցելի է դարձնում ՀՈՒԿ:

ՀՈՒԿ կողմից կենսաթոշակների տնօրինումը

Հետազոտության համար նաև կարևոր է պարզել, թե որքանով են ՀՈՒԿ տնօրինում իրենց հասանելիք, թեկուզ և այդքան սակավ եկամուտը: Հարցման մասնակից ՀՈՒԿ մեծամասնությունը՝ 68.7%-ը, ինքնուրույն են ստանում կենսաթոշակը (Նկար 2.27): 21.3%-ի կողմից նշվել է, որ կենսաթոշակը ստանում է իրենց ընտանիքի մեկ այլ անդամ:

Նկար 2.27 Ով է ստանում ՀՈՒԿ հասանելիք կենսաթոշակը



Կանանց 1.3%-ը նշում է, որ հասանելիք կենսաթոշակը ստանում է կողմնակի մեկ այլ անձ: Իսկ հարցվողների 1.3%-ի հավաստմամբ, բոլոր իրավիճակներն էլ հնարավոր են:

Թե ով է տնօրինում ՀՈՒԿ հասանելիք կենսաթոշակը, հարցման մասնակիցների միայն 46.7%-ն է նշում, որ ինքնուրույն է որոշում ամսական ծախսերը: (Տե՛ս Նկար 2.28)

Հարցվողների 28%-ը համաձայնեցնում է իր ծախսերը ընտանիքի անդամների հետ: 12.7%-ի կենսաթոշակը տնօրինում է ընտանիքի անդամներից մեկը: Եվ կանանց 12%-ը նշում է, որ բոլոր դեպքերը հնարավոր են:

Նկար 2.28 Ով է ծախսում ՀՈՒԿ հասանելիք կենսաթոշակը



Կարևոր էր նաև պարզել, թե ամսական եկամտի որ մասն է ծախսվում ՀՈՒԿ կարիքների վրա (Նկար 2.29): Ինչպես երևում է պատկերից, հարցված կանանց միայն 20%-ն է իրեն հասանելիք եկամուտը ծախսում միայն իր սեփական կարիքների վրա: 13.3%-ի հավաստմամբ, եկամտի մեծ մասն է ծառայում սեփական կարիքների բավարարմանը: 2%-ը նշել է, որ ծախսում է իր կարիքների համար, սակայն հարցման մասնակիցների 32.7%-ը նշում է, որ անձնական կարիքների բավարարմանը ծառայում է իր եկամտի քիչ մասը: 8.7%-ի եկամուտը ընդհանրապես չի ծախսվում նրանց կարիքների բավարարման համար:

Նկար 2.29 Եկամտի որ մասն է ծախսվում ՀՈՒԿ կարիքների վրա



Ինչպես նշում է 18.7%-ը, կախված իրավիճակից, ընտանիքում բոլոր դեպքերն էլ հնարավոր են: Որպեսզի գնահատվի, թե իրականում որքանով են ՀՈՒԿ կարիքները բավարարված, առաջարկվել է նրանց որոշել, թե եթե նրանց միանվագ գումար տրամադրվի 200000 դրամի չափով, ապա որ ծախսերի վրա կբաշխվեր այդ գումարը:

Այդ հարցին ՀՈՒԿ հարցման յուրաքանչյուր 3 մասնակիցներից մեկը (30.7%-ը) նշել է, որ կծախսի սննդի վրա: Գրեթե նույնքանը՝ 31.7%-ը նախ և առաջ կծախսեր կոմունալ վճարների, ձմռանը ջեռուցման կազմակերպման նպատակով: Մասնակիցների 48%-ը այդ գումարը կհատկացներ առողջական կարիքների բավարարման վրա: Կանանց 18.7%-ը հագուստի առաջնային կարիք ունի: Ռեսպոնդենտների 14.7%-ը գումարը կծախսեր բնակարանի վերանորոգման, գույք և սարքավորումներ ձեռքբերելու նպատակով և նույնքանը նաև

կփակեր իր պարտքերը (վարկերը): Հարցման մասնակիցների միայն 10.7%-ը կտրամադրի 200000 դրամը հանգստի և ժամանցի կազմակերպման նպատակով: Կանանց 5.3%-ը կներդներ այդ գումարը որևէ գործարար նախաձեռնության մեջ: Տե՛ս Նկար 2.30:

Նկար 2.30 Ինչպես ՀՈՒԿ կողմից կծախսվի տրամադրված միանվագ 200.000 դրամը



Սոցիալական ծառայությունների գործունեության գնահատումը ՀՈՒԿ կողմից

Հարցման արդյունքում պարզ դարձավ, որ ՀՈՒԱ իրենց պաշտպանված չեն զգում սոցիալական ծառայությունների կողմից: Նախ, հարցվողների շրջանում քիչ թվով կանայք են օգտվում սոցիալական՝ պետական կամ ոչ պետական ծառայություններից: Տե՛ս Նկար 2.31: Հարցվողներից 66.7%-ը չի օգտվում որևէ սոցիալական ծառայությունից: Կանանց 18.7%-ը հանդիսանում է պետական սոցիալական ծառայության շահառու, իսկ 14.7%-ը՝ ոչ պետական:



Նկար 2.32.1 Պետական սոցիալական ծառայությունների մասնագիտական հմտությունների գնահատումը ՀՈՒԿ կողմից



Նույն մասնագիտական հմտությունների չափանիշով առաջարկվել էր գնահատել ոչ պետական սոցիալական ծառայությունների աշխատանքը: Ակնհայտ է, որ մեծամասամբ հարցման մասնակիցները բավարարված են հասարակական, ոչ պետական ծառայությունների հմտություններով: Հարցվողների գերակշռող մեծամասնությունը՝ 72.7%-ը գնահատում է ոչ պետական սոցիալական ծառայությունների մասնագիտական հմտությունները լիովին բավարար: Վերապահումով բավարար են գնահատում կանանց 4.5%-ը, իսկ 22.7%-ի կարծիքով գնահատականը չեզոք է: Տե՛ս Նկար 2.32.2:

Հարցվող կանանց առաջարկվել էր գնահատել սոցիալական ծառայությունների գործունեությունը մի քանի չափորոշիչների համաձայն: Այսպես, պետական սոցիալական ծառայությունների (ՊՍԾ) աշխատակազմի մասնագիտական հմտությունների որակը կանանց 32.1%-ի կողմից գնահատվել է որպես լիովին բավարար: 10.7%-ը նշել են, որ բավարարված են, իսկ 39.3%-ը չեզոք դիրքորոշում ունի՝ այսինքն, գնահատականը ոչ դրական է, ոչ էլ բացասական: 14.3%-ի կարծիքով ՊՍԾ ներկայացուցիչների մասնագիտական հմտությունները որոշակիորեն անբավարար են, իսկ 3.6%-ի կարծիքով՝ անբավարար: Տե՛ս Նկար 2.32.1:

Նկար 2.32.2. Ոչ պետական սոցիալական ծառայությունների մասնագիտական հմտությունների գնահատումը ՀՈՒԿ կողմից



Հաջորդ կարևոր չափորոշիչը, ըստ որի գնահատվել է պետական և ոչ պետական սոցիալական ծառայությունների աշխատակազմը, հանդիսանում է պատասխանատվության զգացումը: ՊՄԾ աշխատողների պատասխանատվությունը որպես լիովին բավարար են գնահատել մասնակիցների 35.7%-ը (Տե՛ս Նկար 2.33.1), իսկ ոչ պետական սոցիալական ծառայությունների նույն հատկանիշը գնահատվել է որպես լիովին բավարար 72.7% կանանց կողմից (Տե՛ս Նկար 2.33.2):

Նկար 2.33.1 Պետական ծառայությունների պատասխանատվության գնահատումը ՀՈՒԿ կողմից



Նկար 2.33.2 Ոչ պետական սոցիալական ծառայությունների պատասխանատվության գնահատումը ՀՈՒԿ կողմից



Ինչպես երևում է երկու զուգահեռ պատկերներից՝ Նկար 2.34.1 և Նկար 2.34.2, նմանատիպ պատկեր է ստացվում մեկ այլ չափորոշիչի գնահատման տեսանկյունից՝ աշխատակազմի կողմից էթիկական նորմերի պահպանումը ՊՍԾ և ոչ ՊՍԾ կողմից:

Նկար 2.34.1 Պետական ծառայությունների աշխատակազմի էթիկական նորմերի գնահատումը ՀՈՒԿ կողմից



Նկար 2.34.2 Ոչ պետական ծառայությունների էթիկական նորմերի գնահատումը ՀՈՒԿ կողմից



Այսպիսով, մարդիկ հակված են վստահելու և հավանության արժանացնելու ոչ պետական կառույցների ներկայացուցիչների աշխատանքը տարբեր չափորոշիչների և գործոնների տեսանկյունից: Այս ոլորտը հստակ մատնանշում է ՀՈՒԿ նկատմամբ խտրականության դրսևորումների հավանականությունը, քանի որ հատուկ հոգածության կարիք ունեցող այս խոցելի խումբը չի ստանում համապատասխան որակի ծառայություններ պետական գործակալությունների կողմից:

ՀՈՒԿ հաշմանդամության կարգի, տեսակի մասին տեղեկատվություն

Հարցման մասնակից կանանց 43.3%-ը ունեն երրորդ խմբի հաշմանդամություն: Երկրորդ խմբի հաշմանդամության փաստը նշել են հարցվողների 42%-ը: Եվ առաջին խմբի հաշմանդամությունը արձանագրել են կանանց 12%:
Տե՛ս Նկար 2.35:

Նկար 2.35 Հարցվողների հաշմանդամության խումբը



Հարցման մասնակիցների մեծամասնությունը՝ 59.3%-ը, ունի ֆիզիկական հաշմանդամություն, 11.3%-ը՝ լսողական, իսկ 8.7%-ը՝ տեսողական: Կանանց 10.7%-ը նշել է շնչառական խնդիրները, 6.7%-ը՝ մտավոր: Տե՛ս Նկար 2.36:

Նկար 2.36 Հարցվողի հաշմանդամության տեսակը



Հարցմանը մասնակցող կանանց մեծամասնության՝ 68.7%-ի հաշմանդամությունը ձեռքբերովի է, իսկ մասնակիցների 29.3%-ի հաշմանդամությունը՝բնածին: Տե՛ս Նկար 2.37:

Նկար 2.37 Հարցվողի հաշմանդամության բնույթը



Ձեռքբերովի հաշմանդամություն ունեցող յուրաքանչյուր 3 կանանից մեկը՝ 31.1%-ը, ձեռք է բերել հաշմանդամությունը վաղ մանկական տարիքում՝ 0-3 տարեկանում: 4.9%-ը նման խնդրի հետ է բախվել 4-7 տարեկան հասակում: Ինչպես երևում է Նկար 2.38-ում, կանանց բավականին մեծ զանգված՝ 30.1%-ը, հաշմանդամության ձեռք բերման տարիք նշել է 35-50-ը:

Նկար 2.38 Հաշմանդամության ձեռք բերման տարիքը



	0-3	4-ից 7	8-ից 13	14-ից 19	20-ից 25	26-ից 35	35-ից 50	51-ից 65
Ряд1	31,10%	4,90%	1,90%	6,80%	8,70%	11,70%	30,10%	4,90%

ՀՈՒԿ առողջապահական ծառայություններից օգտվելը

Հարցման արդյունքները վկայում են, որ հաշմանդամություն ունեցող կանանց միայն 16%-ն է մշտապես օգտվում առողջապահական ծառայություններից: Կանանց 27.3%-ը օգտվում է նույն ծառայություններից որոշակի պարբերությամբ: Բավականին մեծ թվով կանայք առողջապահական հաստատությունների ծառայություններից օգտվում են միայն խիստ կարիքի դեպքում: Հարցվողների 14%-ը առողջապահական ծառայություններից ընդհանրապես չի օգտվում: Տե՛ս Նկար 2.39:

Նկար 2.39 Առողջապահական ծառայություններից օգտվելու հաճախականությունը



ՀՈՒԿ կանանց միայն 16%-ն է օգտվում վերականգնողական ծառայություններից, որոնցից միայն 1.3%-ն է օգտվում մշտապես: Կանանց 16%-ի համար վերականգնման գործընթացը իրականացվում է հատուկ կարիքի դեպքերում: Հարցման մասնակիցների 65.3%-ը ընդհանրապես չի օգտվում այդ ծառայություններից (Տե՛ս Նկար 2.40): Այս ցուցանիշը վկայում է, որ վերականգնման գործընթացը, որն անչափ կարևոր է ՀՈՒԿ համար և շատ դեպքերում ավելի հրատապ, քան բուժական գործընթացը, հասանելի չէ հաշմանդամություն ունեցող կանանց

համար: Եթե հաշվի առնենք, որ հարցվող կանանց շուրջ 60%-ը ունեն ֆիզիկական հաշմանդամություն, ապա պարզ է (Տե՛ս Նկար 2.40), որ վերականգնողական ծառայությունները մեծամասամբ հասանելի չեն կանանց:

Նկար 2.40 Վերականգնողական ծառայություններից
օգտվելու հաճախականությունը



ՀՈՒԿ առաջնային կարիքների գնահատումը

ՀՈՒԿ համար առողջապահական ծառայությունների անհասանելի լինելու փաստը իրավունքների ոտնահարման մեծագույն վկայություն է, քանի որ հարցման մասնակից ՀՈՒԿ 46.7%-ի համար առաջնային կարիք է հանդիսանում բուժումը, 35.3%-ի համար՝ ֆիզիոթերապիայի, վերականգնման անհրաժեշտությունը, 34.7%-ի համար՝ ստույգ ախտորոշումը: Հարցման մասնակից 40% կանայք դեղորայքի կարիք ունեն, 20%-ը նշել է նաև վիրահատության անհրաժեշտությունը: Տե՛ս Նկար 2.41:

Նկար 2.41 ՀՈՒԿ առողջական կարիքները



	հատուկ սարք, սարքավորումներ, պարագաներ	ախտորոշում	բուժում	վերականգնում, ֆիզիոթերապիա	դեղորայք	վիրահատություն	հոգեբանական աջակցություն	առողջարանային հանգիստ	բոլոր կարիքները բավարարված են
Ряд1	17,30%	34,70%	46,70%	35,30%	40%	20%	20%	0,70%	4%

ՀՈՒԿ հիմնախնդիրների վերաբերյալ տեղեկացվածությունը

Հաշմանդամություն ունեցող կանանց շրջանում միայն 27.3%-ն է իրեն համարում որոշակիորեն տեղեկացված ՀՈՒԿ հիմնախնդիրների վերաբերյալ, իսկ հարցվածների 30%-ը՝ քիչ տեղեկացված: Կանանց 25.3%-ը ընդհանրապես տեղեկացված չէ, թե այլ ՀՈՒԿ ինչպիսի խնդիրներ ունեն, ինչ հիմնահարցերի և խոչընդոտների հետ են բախվում: Տե՛ս Նկար 2.42:

Նկար 2.42 Հարցվողների տեղեկացվածությունը ՀՈՒԿ հիմնախնդիրների վերաբերյալ



ՀՈՒԿ կյանքի որակի վրա ազդող գործոնների գնահատումը

Այն հարցին, թե ինչպես կարելի է բարելավել ՀՈՒԿ կյանքի որակը, հարցման մասնակիցների 18.7%-ը պատասխանել է, որ անհրաժեշտ է ուժեղացնել պետության աջակցությունը: 18.7%-ը գտնում է, որ պետք է նպաստել ՀՈՒԿ համար զբաղվածության ստեղծմանը: 13.3%-ը նշում է, որ կարևոր է ՀՈՒԿ համար առողջապահական ծառայությունները դարձնել ավելի մատչելի, և նույնքանը պատասխանել են, որ անհրաժեշտ է փոփոխել հասարակության վերաբերմունքը: Հարցման մասնակիցների 12.7%-ը գտնում է, որ ՀՈՒԿ իրազեկվածության բարձրացումը կարող է բարելավել վերջիններիս կյանքի որակը: Հարցվողները, որպես կարևոր նախապայման, նաև նշել են հանրային ծառայությունների, տեղաշարժման մատչելիությունը, հոգեբանական ծառայությունների որակի բարելավումը և հասանելիությունը ՀՈՒԿ համար: Տե՛ս Նկար 2.43:

Նկար 2.43 Ինչպես բարելավել ՀՈՒԿ կյանքի որակը



Բռնության դրսևորումների հավանականության գնահատումը ՀՈՒԿ նկատմամբ

ՀՈՒԿ շրջանում ընդունված չէ քննարկել բռնությունների թեման: Այդ իսկ պատճառով հարցման մասնակիցներին առաջարկվել է ենթադրական մի իրավիճակ: Հարցադրումը վերաբերվում էր ենթադրական մի բռնության ենթարկված կնոջը խորհուրդ տալուն, թե ինչ անել այդ իրավիճակում: Հարցված յուրաքանչյուր երեք կանանցից մեկը առաջարկում է որպես ելք պայքարել սեփական ուժերով: Հարցման մասնակիցների 30.7%-ը գտնում է, որ պետք է դիմել համապատասխան պաշտոնական ատյաններին: Կանանց 22.7%-ը գտնում է, որ պետք է դիմել հեղինակություն և ազդեցություն ունեցող որևէ անձի: Եվ 5.3%-ը նշել է, որ պետք է համակերպվել: Տե՛ս Նկար 2.44:

Նկար 2.44 Խորհուրդ բռնության ենթարկվող ՀՈՒԿ



Եթե քննարկենք հարցման մասնակիցների կողմից առաջարկվող լուծումները՝ ուղղված բռնության իրավիճակում հայտնված կնոջը, ապա վստահաբար կարելի է ասել, որ հաղորդակցման, տեղաշարժման կամ ընկալման դժվարություն ունեցող կանանց համար ենթադրական դրությունը ստեղծում է գրեթե անելանելի իրավիճակ: Միշտ չէ, որ որևէ լուծում իրականում կիրառելի է: Այս խնդիրը հրատապ է ոչ միայն Հայաստանյան իրականության, այլև տարբեր զարգացած հասարակությունների համար, որտեղ առկա է զարգացած սոցիալական աշխատանքի համակարգը և գործում են սոցիալական վերահսկողության տարբեր գործուն մեխանիզմներ: Այս իրավիճակի հետ պայքարը և վերահսկողությունը պետք է ընդգրկի բազմազան շերտեր՝ աշխատանք ՀՈՒԿ շրջանում, նրանց ընտանիքների և անմիջական շրջապատի հետ՝ ներմուծելով սոցիալական աշխատանքի տարբեր մակարդակներ:

Առաջարկելով պրոյեկտել նույն խնդիրը սեփական անձի վրա՝ հարցման մասնակից ՀՈՒԿ առաջարկել են նույն ելքը: Տե՛ս Նկար 2.45:

Նկար 2.45 Հարցվողի գործողությունները ընտանիքում բռնության գործադրման դեպքում



Հայաստանում ՀՈՒԿ դրության գնահատումը

Որպեսզի հնարավոր լինի պարզել հասարակության վերաբերմունքը ՀՈՒԿ նկատմամբ, հարցման մասնակիցներին առաջարկվել են պնդումներ հաշմանդամություն ունեցող կանանց դրության վերաբերյալ: Ինչպես կարելի է նկատել Նկար 2.46-ում, հարցվողների կեսից քիչը՝ 46.7%-ն է համաձայն, որ հաշմանդամություն ունեցող կանայք հասարակության լիարժեք անդամ են: Կանանց միայն 45.3%-ն է համամիտ, որ Հայաստանում ՀՈՒԿ հանդիսանում են քաղաքացիական գործընթացների լիարժեք մասնակից, օրինակ, կարողանում են մասնակցել ընտրությունների: Հարցված կանանց միայն 24%-ն է համաձայն, որ հասարակությունը պատրաստակամ է աջակցելու ՀՈՒԿ: Հարցվողների միան 29.3%-ն է կարծում, որ ՀՈՒԿ հնարավորություն ունի մասնակցելու հանրային տարբեր միջոցառումների: Հարցման մասնակիցների միայն 23.3%-ն է նշում, որ ՀՈՒԿ կարող են ազատ տեղաշարժվել, իսկ նրանց միայն 12%-ն է կարծում, որ ՀՈՒԿ և ոչ ՀՈՒԿ հիմնախնդիրները նույնն են: Կանանց միայն 6%-ն է գտնում, որ Հայաստանում ՀՈՒԿ իրավունքները պաշտպանված են:

Ընտանիքում ՀՈՒԿ դրության գնահատումը

Պնդումների մի մասը վերաբերվում էր ՀՈՒԿ դրությանը իրենց ընտանիքներում: Հարցվողների միայն 54.7%-ն է համաձայն, որ հաշմանդամություն ունեցող կանանց ընտանիքները նրանց հետ պատշաճ կերպով են վարվում: Այսպես, մասնակիցների 35.3%-ն է միայն համամիտ, որ ՀՈՒԿ իրենց ընտանիքներում չեն ենթարկվում ֆիզիկական ճնշումների: Հարցվողների 26%-ը համաձայն է, որ ՀՈՒԿ չեն ենթարկվում հոգեբանական ճնշումների իրենց ընտանիքների անդամների կողմից: Այն հարցին, թե համաձայն են, որ ՀՈՒԿ պաշտպանված են բոլոր տեսակի բռնություններից, դրական պատասխան են տվել մասնակիցների միայն 14%-ը: Եվ վերջապես, կանանց միայն 3.3%-ն է համաձայն, որ մեր երկրում ՀՈՒԿ սոցիալապես ապահովված են:



Հարցման արդյունքները վկայում են, որ հարցման մասնակիցների գնահատմամբ ՀՈՒԿ իրավունքները ներկայումս մեր հասարակության մեջ պաշտպանված չեն ոչ սեփական ընտանիքներում, ոչ էլ պետության և հանրության կողմից:

ՀՈՒԿ շրջանում տեղեկացվածության աստիճանը սեռական բռնությունների վերաբերյալ

Այն հարցին, թե արդյոք ձեզ հայտնի են ՀՈՒԿ շրջանում սեռական բռնությունների դրսևորման դեպքեր, հարցման մասնակիցների 4%-ն է նշել, որ լավատեղյակ է նման դեպքերից և տեղյակ է մանրամասների: 20%-ը նշել է, որ գիտի սեռական բռնության դեպքերի մասին, սակայն մանրամասներին չի տիրապետում: Հարցվողների 46%-ի գնահատմամբ, կոնկրետ դեպքերի մասին չի լսել, բայց գիտի, որ նման իրավիճակներում ՀՈՒԿ հայտնվում են: 14.7%-ի կարծիքով, նման դեպքեր չեն լինում: Կանանց 12%-ը հրաժարվել է պատասխանից: Իսկ հարցման մասնակիցներից մեկը նշել է, որ նման դեպք պատահել է անձամբ իր հետ: Տե՛ս Նկար 2.47:

Նկար 2.47 Տեղեկացվածությունը սեռական բռնության ենթարկված ՀՈՒԿ վերաբերյալ



Հարցման մասնակիցներին առաջարկվել էր գնահատել, թե հաշմանդամության որ տեսակն է պոտենցիալ բռնության տեսանկյունից առավել ռիսկային: Ըստ 38% հարցված կանանց, առավել ռիսկային են մտավոր խնդիրներ ունեցող կանայք: 15.3%-ի կարծիքով տեսողական խնդիրներով կանայք են պոտենցիալ վտանգի մեջ: Հարցման մասնակիցների 13.3%-ի կարծիքով ֆիզիկական հաշմանդամություն ունեցող կանայք են ավելի ռիսկային, իսկ 5%-ի համար՝ լսողական խնդիրներ ունեցողները: Հարցման մասնակից կանանց 4%-ի կարծիքով հաշմանդամության տեսակը կապ չունի (Նկար 2.48):

Նկար 2.48 Սեռական բռնության համար պոտենցիալ ռիսկ ներկայացնող հաշմանդամության տեսակը ըստ հարցվողների



Հարցվողներին առաջարկվել էր գնահատել, թե ինչ միջոցներով կարելի է նվազեցնել ՀՈՒԿ նկատմամբ բռնությունները: Ինչպես կարելի է տեսնել Նկար 2.49-ում, բավականին մեծ թվով հարցվողներ չեն նշել որևէ ելք կամ խուսափել են պատասխանից:

Նկար 2.49 Ինչպես նվազեցնել ՀՈՒԿ նկատմամբ բռնությունների դրսևորման ռիսկը



Կանանց 11.3%-ի կարծիքով, անհրաժեշտ է հզորացնել ՀՈՒԿ՝ խթանելով տարբեր հմտությունների և այլընտրանքային կարողությունների ձևավորման հնարավորությունները: Հարցվողների 9.3%-ի համար լուծումը գտնվում է իրազեկման դաշտի ընդլայնման ոլորտում: Կանանց 8.7%-ի գնահատմամբ, պետք է խստացնել իրավունքների պաշտպանության գործառույթներ իրականացնող կառույցների իրավասությունների դաշտը: Իսկ հարցվողների 6.7%-ի կարծիքով, լուծումը պետք է գտնել հասարակության վերափոխման, դաստիարակման, ՀՈՒԿ նկատմամբ հարգանքի դաստիարակության ոլորտում: Հարցման մասնակիցների 2.7%-ի կարծիքով, պետք է հնարավորություն ստեղծել ՀՈՒԿ ֆինանսական անկախության ձեռքբերման համար:

ՀՈՒԿ դրության դինամիկան Հայաստանում

Հարցման մասնակիցներին առաջարկվել էր գնահատել Հայաստանում ՀՈՒԿ դրության փոփոխությունը վերջին տարիների կտրվածքով: Տե՛ս Նկար 2.50:

Նկար 2.50 ՀՈՒԿ դրության դինամիկան վերջին 3 տարիների ընթացքում



Հարցվողների յուրաքանչյուր 3-ից մեկի գնահատմամբ (30.7%)՝ ՀՈՒԿ դրությունը վերջին երեք տարիների ընթացքում բարելավվել է: Հարցման մասնակիցների առավել զանգվածը՝ 42.7%-ը, հակված է կարծելու, որ Հայաստանում հաշմանդամություն ունեցող կանանց դրությունը չի փոխվել, մնացել է նույնը: Իսկ 17.3%-ը գտնում է, որ ընդհակառակը, ՀՈՒԿ դրությունը ավելի է վատացել:

Այն հարցին, թե ինչով է հիմնավորված բացասական դինամիկայի վերաբերյալ տեսակետը, հարցման մասնակիցների 30.8%-ի կարծիքով պատճառը կանանց ֆինանսական դրության վատացումն է՝ պայմանավորված վերջին տարիներին դրամի արժողության կտրուկ տատանումներով, որի հետևանքն էր սննդամթերքի և էներգակիրների գնաճը, որոնց չեն կարող հետևել նպաստների և թոշակների որոշակի բարձրացումները: Կանանց 19.2%-ի կարծիքով, վերջին երեք տարիների ընթացքում պակասել է պետության կողմից ուշադրությունը, և նույնքանի համար հիմնական պատճառ է հանդիսանում գործազրկության աճը, ինչը

ոչ միայն ՀՈՒԿ համար աշխատանքային հեռանկարների նվազեցման առումով դժվարին իրավիճակ է ստեղծել, այլև հանգեցրել է ՀՈՒԿ ընտանիքների մյուս անդամների եկամտի նվազեցմանը: Իսկ կանանց 11.5%-ը գտնում է, որ ՀՀ-ում ՀՈՒԿ իրենց անպաշտպան են զգում: Հարցման մասնակիցների 7.7%-ի համար խնդրի պատճառը առողջապահական ծառայությունների որակի թերի լինելն է, և նույնքանի համար նաև ՀՈՒԿ շրջանում անբավարար իրազեկության մակարդակն է (Նկար 2.51):

Նկար 2.51 ՀՈՒԿ դրության վատացման հնարավոր պատճառները



ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հետազոտության արդյունքում ձևակերպվել են հիմնական եզրակացությունները և առաջարկությունները:

- Հարցումը բացահայտեց, որ Հայաստանում գործող ՀԿ-ները առաքելության և ՀԿ-ին բնութագրող այլ փաստաթղթային ձևակերպումներում օգտագործում են հնարավորինս լայն սահմանումներ, ինչն, իրենց կարծիքով, հնարավորություն է տալիս իրականացնել բազմապրոֆիլ ծրագրեր, այլ ոչ թե մասնագիտանալ որոշակի նեղ սոցիալական ծառայությունների մատուցման ոլորտում: Այս յուրահատկությունը մի կողմից ֆինանսական միջոցների հայթայթման առումով հեշտացնում է ՀԿ-ների հավակնությունները, սակայն, մյուս կողմից, բացասաբար է ազդում ՀԿ-ների կարողությունների զարգացման և ռազմավարական ուղղությունների իրականացման հարցում, ստեղծում է դուպլիկացիայի (կրկնվող գործունեության) բազմաթիվ նախադեպեր: Նեղ ծառայությունների մատուցման ոլորտում մասնագիտացած կազմակերպություններն ունեն ավելի մեծ հավանականություն որոշակի ոլորտում զբաղեցնել առաջնորդող դեր և կատարելագործել ծառայությունների որակը:
- Հարցումը վկայում է, որ, չնայած այն փաստին, որ ՀԿ-ների համագործակցության շրջանակը վերջին շրջանում ընդլայնվել է, սակայն թույլ է կապը գործարար ոլորտի ներկայացուցիչների հետ: Ձեռներեցության բնագավառում իրականացվող սոցիալական պատասխանատվության կայացման գործընթացն անհրաժեշտաբար պետք է ուղեկցվի ՀԿ-ների ակտիվ ներգրավմամբ: ՀՈՒԿ հիմնահարցերով զբաղվող ՀԿ-ները կարիք ունեն գործունեության լուսաբանման, հանրության ներգրավման համար հուզական միջոցների կիրառման, ինչպես ՀԿ-ների հանրային հաշվետվողականության մեխանիզմների ինստիտուցիոնալացման: Բիզնես ոլորտի հետ վստահելի և կայուն կապի հաստատման համար կարևոր նախապայման է ՀԿ-ների գործունեության թափանցիկությանն ուղղված միջոցառումների իրականացումը:
- Հարցումը բացահայտեց, որ հաշմանդամություն ունեցող անձանց շրջանում ծառայություններ մատուցող հասարակական կազմակերպությունները պետք է մեծ ուշադրություն դարձնեն հատկապես ՀՈՒԿ կարողությունների, ներուժի զարգացմանն ուղղված, նոր հնարավորությունների խթանման ծրագրերի նախագծման և իրականացման վրա: ՀԿ-ների ուշադրությունից հիմնականում դուրս են մնում նաև ՀՈՒԿ ընտանիքների հետ աշխատանքը: Սահմանափակ են ՀՈՒԿ համար մատուցվող ծառայությունների ցանկը,

որոնք մեծամասամբ սահմանափակվում են իրազեկման, ուսուցման, կրթական և տեղեկատվական գործընթացներով:

- Հայաստանյան իրականության մեջ իրազեկման, ուսուցման գործողությունները ներառական հասարակության կայացման կարևորագույն նախապայմանն են հանդիսանում, սակայն ավելի քիչ ծրագրեր են իրականացվում՝ ուղղված ՀՈՒԿ տնտեսական և ֆիզիկական անկախությանը, կայունությանը, հոգեկան և ֆիզիկական առողջությանը: Խնդիրը անշուշտ բարդանում է հաշմանդամության տեսակի հետ կապված հնարավորությունների սահմանափակությամբ, թիրախ խմբերի հատուկ կարիքներով, սակայն այս ուղղությամբ աշխատելու և գործելու մեծ բաց կա:
- Հարցման արդյունքները վկայում են, որ ոչ պետական կազմակերպությունների կողմից ՀՈՒԿ տրամադրվող սոցիալական ծառայությունների որակը պետական սոցիալական ծառայությունների համեմատությամբ շահառուների կողմից գնահատվում է ավելի բարձր: Այս ոլորտում հնարավորություն կա իրականացնելու շահերի պաշտպանության գործընթաց, որի արդյունքում պետական մարմինները կկարողանան պատվիրել խոցելի խմբերին տրամադրվող ծառայությունները ոչ պետական, հասարակական կազմակերպություններին:
- ՀՈՒԿ մեծամասնությունը չի օգտվում որևէ սոցիալական աջակցության ծառայությունից: Իսկ շատ հաճախ այդ ծառայություններից օգտվողների համար այդքան էլ պարզ չէ, թե որոնք են հանդիսանում այդ ծառայությունների իրական առաքելությունը և հիմնական գործառույթները: Վերջիններս սահմանափակվում են կենսաթոշակի հետ առնչվող հարցերի միջամտությամբ: Հայաստանում սոցիալական ծառայությունների որակի բարձրացումը և գործառույթների շրջանակի ընդլայնումը հնարավորություն կտա ավելացնել շահառուների քանակը, վերահսկել ՀՈՒԿ դրությունը ընտանիքներում:
- ՀՈՒԿ համար պետական որոշումների վերաբերյալ տեղեկատվության անհասանելիությունը խտրականության տարբեր դրսևորումների համար ստեղծում է նպաստավոր պայմաններ:
- ՀՈՒԿ կրթական հնարավորությունների սահմանափակությունը հանդիսանում է Հայաստանում լուրջ խնդիր: Չնայած այն հանգամանքին, որ միջնակարգ կրթությունը որոշակի առաջընթաց է կատարում դեպի ներառական կրթության համակարգի կայացումը և զարգացումը, այդ մոտեցումը չի տարածվում մասնագիտական կրթական օղակում, մասնավորապես՝ բարձրագույն և հետբուհական: Շատ հաճախ

հաշմանդամություն ունեցող կնոջ համար կրթական համակարգի աստիճաններով անցնելը և ոլորտում հաջողություններ ունենալը նշանակում է մեծ կամքի դրսևորում, դժվարությունների, խոչընդոտների և ոչ հարմարավետ հոգեբանական, ֆիզիկական միջավայրի մարտահրավերների հաղթահարում: Այս ուղղությամբ մեր պետությունը և ՀԿ-ները մեծ անելիք ունեն, չնայած այն հանգամանքին, որ կան արտոնություններ ՀՈՒԱ համար: Սակայն սոցիալական և ֆիզիկական միջավայրը թերի է:

- ՀՈՒԿ առաջնային իրավունքներից է ընտանիք կազմելու իրավունքը: Պետությունը այս ուղղությամբ որևէ խրախուսման կամ հատուկ արտոնությունների տրամադրման միջոցառումներ չի կիրառում: ՀՈՒԿ հետ աշխատանքի ելակետը պետք է լինի նախ և առաջ ընտանիքը. նախ կնոջ ընտանիքը և ընտանիքի բոլոր անդամները, երկրորդ հերթին՝ ՀՈՒԿ ընտանիքից դուրս անմիջական միջավայրը: ՀՈՒԿ ընտանիքների հզորացման, նոր հնարավորությունների ստեղծման, ձեռներեցության, զբաղվածության, եկամտաբեր գործունեության հնարավորությունների ստեղծման ուղղությամբ աշխատանքը կկայունացնի ՀՈՒԿ դրությունը, կբարձրացնի նրանց հեղինակությունը և դիրքը ընտանիքներում: Այս ամենը կարևոր նախապայման է ՀՈՒԿ նկատմամբ բռնությունների կանխարգելման և ռիսկերի նվազեցման համար:
- ՀԿ-ների համար ՀՈՒԿ հետ արդյունավետ աշխատելու կարևոր ռազմավարական ուղղություն կարող է հանդիսանալ կանանց շրջանում առաջնորդության հմտությունների ձևավորումը: ՀՈՒԿ հիմնախնդիրների լուծման ուղի կարող է հանդիսանալ նրանց լայն ներգրավումը քաղաքացիական և քաղաքական գործընթացներում:
- ՀՈՒԿ շրջանում կոնֆլիկտների լուծման հմտությունների ձևավորումը կարող է ստեղծել նպաստավոր պայմաններ բռնությունների ռիսկերի նվազեցման համար:
- Շատ կարևոր են ՀՈՒԿ շրջանում անձնական կապերի, կոնտակտների, շփումների շրջանակի ընդլայնման հնարավորությունները: Այս առումով սոցիալական ցանցերի առկայությունը կարող է դրական դեր խաղալ վիրտուալ ծանոթությունների, ընկերությունների ստեղծման, պահպանման հարցում: Սակայն այս գործընթացը և ՀՈՒԿ շփումների բնական կարիքը անհրաժեշտություն ունի համակարգելու, ուղղորդելու, կազմակերպելու՝ ստեղծելով խմբեր և վիրտուալ ակումբներ ըստ նախասիրությունների: Սակայն հարցման արդյունքները վկայում են, որ հատկապես տեսողական և լսողական խնդիրներով կանանց համար

տեղեկատվական որոշ միջոցներ անհասանելի են: Ուստի հարկավոր է հնարավորության սահմաններում այդ միջոցները դարձնել ներառական և մատչելի:

- Շատ կարևոր է մշակել նորարարական և իրազեկմանն ուղղված տեղեկատվական ծառայությունների հասանելիությանն աջակցող ռազմավարություն, որով ՀՈՒԿ համար իրավունքների վերաբերյալ ինֆորմացիան ավելի մատչելի կերպով կհասնի: Ընդհանուր տեղեկատվական հարթակում կարևոր են ոչ միայն իրավունքների մասին տեղեկատվությունը, այլ նաև տեղեկությունները և հաջողության մասին պատմությունները, ընդհանուր դժվարությունների և դրանց հաղթահարման մասին ինֆորմացիան:
- Չնայած այն հանգամանքին, որ դաշտում գործող քաղաքացիական հասարակության դերակատարների հիմնական գործառույթների մեջ ամենամեծածավալ գործունեությունը պատկանում է իրազեկման ծառայությունների մատուցմանը, ինֆորմացիոն բացը դեռևս շատ մեծ է: Որպես կանոն, ՀԿ-ների շահառուների ցանկը շատ չի փոխվում, և ծառայություններ մատուցվում են հիմնականում նույն կանանց շրջանում: Անհրաժեշտ է քննարկել և մշակել ուղիներ կանանց ավելի լայն շրջանակի բացահայտման և ծրագրային գործընթացներում ՀՈՒԿ ներգրավման համար: Մեծամասամբ ծրագրերում ներգրավվում են այն տեսակի հաշմանդամություն ունեցող կանայք, ովքեր համեմատաբար ավելի հեշտ կարող են հաղորդակցվել, ում հետ կարելի է աշխատել: Սակայն մեծ թվով կանայք դուրս են մնում այդ ծառայությունների շրջանակից՝ մեկուսանալով իրենց ընտանիքներում:
- Համակարգված և սահմանված պարբերականությամբ կրթական ծրագրեր իրականացնել հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկների ծնողների, ամուսինների, նրանց հետ աշխատող բուժքույրերի և խնամքին վերաբերող այլ ծառայություններ մատուցողների հետ՝ հաշմանդամություն ունեցող կանանց խնդիրների և կարիքների, նրանց սեռական և վերարտադրողական առողջության վերաբերյալ:
- Ակտիվորեն ներգրավել հաշմանդամություն ունեցող կանանց այն ծրագրերի, քաղաքականության և արձանագրությունների մշակման և իրականացման գործընթացներում, որոնք նախատեսված են հաշմանդամություն ունեցող կանանց հետ աշխատող ծառայություններ մատուցողների, իրավապաշտպան մարմինների աշխատակիցների և այլոց համար:

- Լուրջ խնդիր է հանդիսանում ՀՈՒԿ ցածր եկամուտը, հիմնական կարիքների բավարարման ցածր մակարդակը, ՀՈՒԿ ընտանիքների ծանր սոցիալական դրությունը: Սակայն հստակ անելիք ունեն նաև սոցիալական աշխատողները, ովքեր կարող են վերահսկել ՀՈՒԿ եկամուտների արդարացի բաշխումը և կանանց կարիքների բավարարումը: Այս առումով մեծ անելիք ունեն հասարակական կազմակերպությունների սոցիալական ծառայությունները, որոնք կարող են պարբերաբար վերահսկել և մոնիթորինգի ենթարկել ՀՈՒԿ ընտանիքները:
- Կարևոր են ՀՈՒԿ զբաղվածության ձեռքբերման համար մասնագիտական հմտությունների ձևավորման, տնային պայմաններում աշխատելու, հիմնական աշխատանքային գործիքների և պարագաների տրամադրման գործընթացները:
- Հարցման արդյունքում պարզվեց, որ առողջապահական որոշ ծառայություններ, այդ թվում բուժական, վերականգնողական և այլն անհասանելի են ՀՈՒԿ համար:
- Կարևոր ուղղություն կարող է հանդիսանալ ողջ հասարակության շրջանում ՀՈՒԿ հիմնախնդիրների վերաբերյալ լայնամասշտաբ իրազեկման գործընթացի կազմակերպումը: ՀՈՒԿ շրջանում բռնությունների և խտրականության ռիսկերի նվազեցման նպատակով՝ հանրությանը պետք է իրազեկել, թե որ գործողություններն են հանդիսանում բռնություն, իսկ որոնք՝ ոչ: Շատ անգամ ընտանիքի անդամները չեն էլ գիտակցում, որ, ստիպելով կնոջը կամքին հակառակ որևէ գործողություն կատարել կամ, ընդհակառակը, արգելքներ դնելով, իրականացնում են բռնություն: Մեր հասարակությունը և առաջին հերթին ՀՈՒԿ և նրանց ընտանիքները կարիք ունեն կրթվելու, իրազեկվելու:
- Բռնությունների կանխարգելման վերաբերյալ անհրաժեշտ է տանել աշխատանք ՀՈՒԿ ընտանիքների հետ: Կարելի է կազմակերպել համատեղ դասընթացներ, բարձրացնել կանանց իրազեկությունն ու հմտությունները՝ բռնությանը դիմադրելու համար: Սակայն այս գործընթացները արդյունավետ կազմակերպելու համար անհրաժեշտ է ոչ միայն ՀՈՒԿ շրջանում, այլև հասարակության մեջ հստակ սահմանել, թե ինչ է նշանակում «բռնություն» կամ «ենթարկել բռնության»: Հարցումը պարզ դարձրեց այն փաստը, որ ՀՈՒԿ, ինչպես նաև ոչ ՀՈՒԿ ճիշտ չեն ընկալում «բռնություն» տերմինը: Շատ հաճախ կինը, ոչ միայն հաշմանդամություն ունեցողը, մի շարք գործողություններ չի որակում որպես ստիպողականություն, բռնություն՝ ընդունելով այն որպես օրենք, մեր իրականության բնորոշ «ադաթ»՝ արդարացնելով և

հավատալով, որ դիմացինն այդպես վարվելու իրավունքը ունի: Մինչև հասարակության մեջ հստակ սահմանման ձևակերպումը չընկալվի, թե ինչպես սահմանազատել բռնությունը և բռնի գործողությունները ոչ բռնի գործողություններից, ապա պայքարելը դրա դեմ կլինի շատ բարդ, գրեթե անհնար: Որպես կանոն, բռնության զոհերը վախեցած, ճնշված վիճակում գտնվող անձինք են, ովքեր մի կողմից վախենում եմ բացահայտել բռնության փաստը, իսկ մյուս կողմից՝ անհարմար են զգում, քանի որ դեռ մանկությունից հասարակական մտածողության մեջ, հատկապես աղջիկների, տարիներ շարունակ գերիշխում է այն մտածելակերպը, որ եթե մարդուն ճնշում են կամ ենթարկում բռնության, ապա այդտեղ կա նաև նրա մեղքը, ինչպես ասում են, ուրեմն «թույլ է տվել»: Այս դատողությունը հատկապես վերաբերում է կանանց: Այս արհեստական գաղափարով փակում են աղջիկների և կանանց առջև որևէ դժգոհության արտահայտման հնարավորություն:

- Միայն սոցիալական ծառայության ինստիտուտի կայացման գործընթացը կարող է հնարավորություն ընձեռել ձերբազատելու ՀՈՒԿ հնարավոր բռնության դրսևորումներից: Այս առումով հասարակական կազմակերպությունները կարող են լիարժեք այլընտրանք հանդիսանալ պետական ծառայություններին:
- Ընդունել «Ընտանեկան բռնության մասին» օրենք, նմ ընտանեկան բռնությունից պաշտպանություն իրականացնող և այն կանխարգելող լիազոր մարմինների գործառույթներում նախատեսել բռնության ենթարկված հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների և շահերի պաշտպանությունը: Ապահովել ՀՈՒԿ և հաշմանդամահեն ՀԿ-ների ներկայացուցիչների մասնակցությունը օրենքի նախագծի մշակմանը:
- Ընդդեմ գենդերային բռնության ռազմավարական ծրագրերում ավելացնել գործողություն, համաձայն որի հետազոտություն կիրականացվի ազգային մակարդակով հաշմանդամություն ունեցող կանանց վերաբերյալ կրթության, առողջապահության, զբաղվածության, սոցիալական և այլ ոլորտներում վիճակագրություն ունենալու նպատակով:
- Բռնության զոհ դարձած կանանց համար նախատեսված ապաստարանները դարձնել մատչելի հաշմանդամություն ունեցող կանանց համար:
- Հետազոտության արդյունքում պարզվեց, որ հաշմանդամություն ունեցող կանանց մեծամասնությունը անտեղյակ է բռնության զոհերի համար նախատեսված թեժ գծի առկայության մասին: Ուստի անհրաժեշտ է բարձրացնել ՀՈՒԿ իրազեկությունը թեժ գծի վերաբերյալ և այն հասանելի դարձնել բոլորի համար:

- ՀՈՒԿ շրջանում բռնությունների և խտրականության ռիսկերի նվազեցման ծրագրերում լայնորեն պետք է ներգրավվեն տղամարդիկ: Որպես կանոն ստացվում է, որ բռնությունների կանխարգելման կամ պայքարի ոլորտում գործում են կին հասարակական գործիչներ, որոնք էլ աշխատում են կանանց հետ: Այս աշխատանքը չի կարող լիարժեք համարվել, եթե բոլոր գործընթացներում չներգրավվեն տղամարդիկ՝ և՛ որպես աշխատող, և՛ որպես թիրախ խումբ:

«ԱԳԱԹ»
Հատուկ Կարիքներով Կանանց Կենտրոն
Հասարակական Կազմակերպություն

ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի 3114 Բազրամյան 17
Հեռ՝ +374 77. 043. 042
0312 4.22.61
Էլ. հասցե՝ agate.ngo@gmail.com
Վեբ կայք՝ www.agatengo.org